

# Հունվար-Փետրվարը Հայ ժողովրդի պատմության մեջ

## 1 հունվար

**1886** Նախիջևանի Կզնուք գյուղում ծնվեց ազգային-ազատագրական շարժման ակնառու գործիչ, Գարեգին Նժդեհը: (Վախճ. 1955թ.-ին):

**1924** Ծնվեց հայ բանաստեղծ, մշակութային գործիչ, գրականագետ Պարույր Սևակը: (Վախճ. 1971թ.-ին):

## 3 հունվար

**1922** Կիլիկիան վերջնականապես դատարկվեց հայերից:

## 4 հունվար

**1928** Սիրիայի Դամասկոս Քաղաքում ծնվեց հայազգի ֆրանսիացի գրող Վահե Քաչան (Խաչատրյան):

## 5 հունվար

**2001** Վախճանվեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, լեզվաբան Վլադիմիր Գրիգորյանը, խորհրդային Միության առաջին թարգմանիչ մեքենայի ստեղծողներից մեկը: (Ծնվ. 1928թ.-ին)

## 6 հունվար

**1199** Լևոն Բ. թագավորի օժուրը Կիլիկիայի Սայր եկեղեցում:

## 12 հունվար

**1933** Գործարկվում է Երևանի տրամվայը:

## 15 հունվար

**1959** Համամիութենական մարդահամարի տվյալներով Երևանի բնակչությունը կազմեց 509,340 մարդ:

## 17 հունվար

**1921** Հայաստանի կառավարությունը բողոք ներկայացրեց թուրքական զորքերի կողմից գրաված շրջաններում կատարված հրեշավոր չարագործությունների կապակցությամբ:

**1939** Սկսվեց համամիութենական մարդահամարը: Մարդահամարի տվյալներով Հայաստանի Հանրապետության բնակչությունը կազմեց 1 միլիոն 282 հազար մարդ, որից մեկ միլիոն 62 հազարը եղել է հայ, 130 հազար 9 հարյուրը՝ ադրբեջանցի, 51 հազար 400՝ ռուս, 20 հազար 5 հարյուրը՝ քուրդ և այլն: Երևան բնակչության թիվը կազմեց 200 հազար 31 մարդ:

## 21 հունվար

**1921** Հայաստանում վերացվեց քաղաքացիական աստիճանները և դասերը: Հայաստանի ամբողջ բնակչության համար սահմանվել է մեկ ընդհանուր կոչում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

## 22 հունվար

**1974** Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը ընտրվեց Նյու Յուրքի ակադեմիայի պատվավոր անդամ:

## 24 հունվար

**1826** Մահացավ Ջուղայեցի Հովակիմ Լազարյանցը: Նա իր եղբոր՝ Հովհաննես Լազարյանցի կտակը գործադրելով 1815 թ.-ին կառուցում է Մոսկվայի Լազարյան ճեմարանը: (Ծնվ. 1743 թ.):

## 30 հունվար

**410** Ծնվեց միջնադարյան պատմագրության ներկայացուցիչ Մովսես Խորենացին:

## 1 փետրվար

**1786** Մոսկվայում ծնվեց 19-րդ դարի հասարակական և մշակութային գործիչ Հովհաննես Նազարյանը: Եղել է Ռուսաստանի արքունիքի սենեկապետ,

իսկական պետական խորհրդական: (վախճ. 1858թ. Պետերբուրգում)

## 2 փետրվար

**891** Մահացավ Աշոտ Մեծը՝ Բագրատունյանց հարստության հիմնադիրը:

**1856** Վաղարշապատում ծնվեց հայ կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ Մակար Եկնայանը: Նրա ստեղծագործությունները մեծ դեր են խաղացել ազգային երաժշտական դպրոցի ձևավորման գործում:

**1885** Ախալքալաքի գավառի Գանձա գյուղում ծնվեց հայ նշանավոր բանաստեղծ, գրական, հասարակական գործիչ Վահան Տերյանը: (Վախճ. 1920թ.-ին):

**1885** Ծնվեց գրող, հրատարակիչ, փիլիսոփա Կոստան Զարյանը: (Վախճ. 1969թ.-ին):

## 3 փետրվար

**571** Ժողովրդական ապստամբություն Սասանյան տիրապետության և զրադաշտական կրոնի բռնության հաստատման դեմ: Վարդան Բ. Սպարապետի հրամանատարությամբ դուրս վտարվեցին Սասանյան ուժերը:

**1922** ՀԽՍՀ սովետների առաջին համագումարը հաստատեց ՀԽՍՀ առաջին սահմանադրությունը:

**1926** Վախճանվեց գերմանացի քրիստոնյա առաջնորդ Յոհաննես Լեպայուսը, որը փորձում էր աշխարհին տեղյակ պահել թուրքերի կողմից հայկական ցեղասպանության մասին նորը չկրկնելու ակնկալիքով: (Ծնվ. 1858 թ.-ին):

**1952** Մահացավ հայ պատմաբան, բանասեր, աղբյուրագետ Հակոբ Մանանդարյանը: (Ծնվ. 1873 թ.-ին):

## 4 փետրվար

**1919** Ղարաբաղի հայոց ազգային խորհուրդը դիմեց Բաքվում տեղակայված դաշնակից զորքերի հրամանատարությանը, որպեսզի Լեռնային Ղարաբաղի տարածքից հեռացնեն ադրբեջանական և թուրքական զորամիավորումները և բրիտանական հսկողությամբ տեղական ինքնակառավարման համակարգ ստեղծեն: Այդ դիմումը մնաց անարդյունք:

## 5 փետրվար

**1877** Արցախի Հաղրութ գյուղում ծնվեց գիտության վաստակավոր գործիչ, մաթեմատիկոս, ինժեներ-տեխնոլոգ Ալեքսանդր Մելիքյանը: Նախագ ծել և կառուցել է Երևանի ջրմուղը:

**1879** Բաքվում, նաֆթարդյունաբերողի ընտանիքում ծնվեց անվանի ինժեներ, գունավոր հեռուստատեսության և լուսահեռագրության առաջին գյուտարար Հովհաննես Ադամյանը: **1970**թ. հունիսին մեծ գյուտարարի աճյունը տեղափոխվել է Երևանի Կոմիտասի անվան քաղաքային պանթեոն: (Վախճ. 1932թ. Լենինգրադում)

## 6 փետրվար

**1300** 53 տարեկան հասակում վախճանվեց Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Երրորդը՝ Հեթում Առաջինի վաճառորդին:

**1905** Ցարական իշխանությունների կազմակերպած հայ-ադրբեջանական ընդհարումները Բաքվում, Երևանում, Գանգակում և Շուշիում:

**1919** Երևանում բացվեց Արևմտահայերի Բ. համագումարը, որն առաջին անգամ բանաձև ընդունեց՝ «Միացյալ և Անկախ Հայաստանի քաղաքական ծրագիրը»: Մասնակցում էին 55 պատգամավոր:

**1980** Շվեյցարիայի Բեռն քաղաքում թուրքական դեսպանի սպանության հետաքննության հետևանքով շվեյցարական ոստիկանությունը ձեռքակալեց «Հայոց ցեղասպանության արդարության մարտիկներ» կամ այլ կերպ ՀՅԱՄ ընդհատակյա քաղաքական կազմակերպության մարտիկ, ֆրանսահայատակ Հրայր-Մաքս Քիլինջյանին, որն 2 տարի անց դատապարտվեց 2 տարվա ազատազրկման:

**7 փետրվար**

**1676** Ծնվեց հայ հասարակական, մշակութային և եկեղեցական գ ործիչ, Մխիթարյան Միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացին: (Վախճ. 1749թ.-ին):

**1887** Թավրիզում ծնվեց քաղաքացիական պատերազմի հերոս, կորպուսի անվանի հրամանատար Գայր Յայկ Բժիշկյանը: Գայր զոհ գնաց ստալինյան բռնատիրություններին՝ 1937թ. դեկտեմբերին:

**1899** Ալեքսանդրոպոլ ժամանեց առաջին գնացքը Թիֆլիսից:

**1992** Հայաստանում բացվեց ԱՄՆ դեսպանատունը՝ առաջին օտարերկրյա դիվանագ իտական ներկայացույթությունը:

**8 փետրվար**

**1895** Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Մատթևոս Իզմիրլյանը Թուրքիայի արդարադատության նախարար Ռզա փաշային ուղղված ուղերձում մանրամասն տեղեկացնում է հայաբնակ վայրերում հայերի հանդեպ կատարվող հակաօրինական արարքների, կեղեքումների և սպանությունների մասին:

**1914** Մեծ տերությունների և Թուրքիայի կողմից ստորագրվեց հայկական բարենորոգ ումների ծրագ իր: Որպես կառավարիչներ Կ. Պոլիս ժամանեցին հուլանդացի Վեսթենենկը և նորվեգացի Յոֆֆը: Առաջին համաշխարհային պատերազմի ժազումով ծրագ իրը մնաց թղթի վրա:

**1915** Երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» հանձնաժողովը ստեղծեց հատուկ ենթահանձնաժողով՝ Թուրքիայի հայ բնակչության տեղահանությունն ու ցեղասպանությունը կազմակերպելու համար:

**9 փետրվար**

**1750** Ծնվեց հայ հասարակական գործիչ Հարություն Շնավոնյանը: (Վախճ. 1824թ.-ին):

**1921** Հանրապետությունում հրապարակվեց հայտարարություն անգրագ ետ և կիսագրագ ետ քաղաքացիների համար գ ռագ իտական և գրավարժական դասընթացներ կազմակերպելու մասին:

**1939** Ալեքսանդրապոլում ծնվեց աստղագ իտության դոկտոր պրոֆեսոր, միջազգ ային աստղագ իտական միության անդամ երվանդ Թերզյանը: Եղել է ամերիկյան Կորնելի համալսարանի ռադիոֆիզիկայի և տիեզերական հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն:

**1953** Մահացավ Սոսե Մայրիկը:

**10 փետրվար**

**440** Վախճանվեց Մեսրոպ Մաշտոցը, հայ գրերի ստեղծող և հայ դպրության հիմնադիրը:

**1828** Պարսկական շահի առաջարկությամբ պարսկական Թուրքմենշայ գ յուղում կնքվեց հաշտության պայմանագիր, որով ավարտվեց 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը: Այդ պայմանագրով երևանի և Նախիջևանի խանությունները, ինչպես և ամբողջ Անդրկովկասը միացվեցին Ռուսաստանին:

**1918** Թիֆլիսում բացվում է անդրկովկասյան սեյմը:

**1935** Ծնվեց բժիշկ, գրող և լրագրող Ջորի Բալայանը:

**1950** Թիֆլիսում մահացավ ակամավոր կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը: (Ծնվ. 1879թ.-ին):

**11 փետրվար**

**1841** Կ. Պոլսում ծնվեց հասարակական-քաղաքական գ ործիչ, բանասեր, պատմաբան, Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանյանը: (Վախճ. 1918 թ.-ին):

**1884** Լոռու Արդվի գ յուղում ծնվեց հայագ ետ, հնագետ, պատմաբան, պրոֆեսոր Աշխարհաբեկ Քալանթարը (Լորիս Քալանթար): Երա շնորհիվ են

փրկվել գիտական կարևոր նշանակություն ունեցող մի շարք նյութեր, նաև Անիի հնագիտական հավաքածուները:

**12 փետրվար**

**1721** Գրիգոր Շղթայակիրը, որը 1715 թ.-ին պատրիարք նշանակվեց, վանքին մեծաքանակ պարտք վճարելու համար վզին շղթա անցկացրած տարիներով նպաստ հավաքելուց հետո հասավ Երուսաղեմ և նստեց պատրիարքի աթոռին: Վճարեց Միաբանության պարտքը, կառուցեց նոր շինություններ և կատարեց բարեկարգ ություններ: (Վախճ. 1749 թ.):

**1908** Կահիրեում վախճանվեց գրող և հրապարակախոս Արփիար Արփիարյանը: (Ծնվ. 1851թ.-ին):

**1918** Մահացավ Սուլթան Համիդը, որը գահընկեց եղավ 1909 թ.-ին:

**1919** Հայկական երկու պատվիրակություն՝ Պողոս Նուբարի և Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ Փարիզի կոնֆերանսին ներկայացրին հանրահայտ «Հայերի պահանջների վերաբերյալ հուշագիրը», որի հիմնադրություններն էին հայկական անկախ պետության ճանաչումը, հայկական կորուստների փոխհատուցումը, դաշնակից տերություններից մեկին 20 տարով Հայաստանի մանդատ հանձնելը, հայերի զանգ վածային ոչնչացման մեղավորներին պատժելը: Փաստաթուղթն արձագ անք չգտավ:

**1921** Սկսվում է Վրաստանի մենշևիկյան կառավարության դեմ Լոռու նախկին «չեզոք գոտու» աշխատավորության ապստամբությունը, որը փետրվարի 16-ին ավարտվում է լիակատար հաղթանակով:

**1988** Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական զանգվածային առաջին ցույցը՝ ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու պահանջով:

**13 փետրվար**

**1870** Ծնվել է ազգ ային ազատագ ռական շարժման գ ործիչ, Հայոց կաթողիկոս Ներսես Հինգերորդ Աշտարակեցին: 1814 թվականին, լինելով Թիֆլիսի հոգևոր թեմի առաջնորդ, հիմնել է Ներսիսյան դպրոցը: (Վախճ. 1957 թ.):

**1921** Դաշնակցականների հակահեղափոխական խռովության սկիզբը:

**1921** Դեռևս անձնատուր չեղող դաշնակցության ուժերը Քեշիշքենդում (Եղեգնաձոր) նորաստեղծ Խորհրդային Հայաստանի դեմ սկսեցին փետրվարյան զինված ապստամբություն:

**14 փետրվար**

**1911** Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Հովհաննես Արշարունին Թուրքիայի արդարադատության նախարարին ուղղված ուղերձում տեղեկացնում է հայաբնակ գ ավառներում տեղի ունեցող թուրք պաշտոնատար անձանց անօրինական արարքների, հայերի սպանության և ունեցվածքի հափշտակման մասին:

**15 փետրվար**

**1810** Փարիզի Արևելյան լեզուների դպրոցում հիմնադրվում է հայոց լեզվի ամբիոն՝ Հակոբ Շահան Ջրպետյանի ղեկավարությամբ:

**1885** Ծնվեց հայ բանաստեղծ, արձակագիր և բժիշկ Ռուբեն Սևակը: (Վախճ. 1915թ.-ին):

**1903** Ֆրանսիացի հասարակական-քաղաքական գործիչ, ժան ժորեսը Փարիզում հանդես եկավ ճառով, որով քննադատեց 1894-96 թվականների աբդուլհամիդյան ջարդերի ժամանակ եվրոպական տերությունների դիրքորոշումը, Հայաստանի հանդեպ վարվելակերպը:

**16 փետրվար**

**1921** Վրաց մենշևիկների տնօրինությանը հանձնված, այսպես կոչված «Լոռու չեզոք գ ոտում», հաղթեց ապստամբությունը վրացական կառավարության դեմ:

Գոտու բուր 41 գ յուղերուն ծածանվեց խորհրդային Հայաստանի դրոշը:

**17 փետրվար**

**362** Ծնվեց հայկական գրի ստեղծող, հայ գ ռչության, հայագ իր դպրոցի հիմնադիր և հայերենի առաջին ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցը: (Վախճ. 440թ.-ին):

**1811** Հիմնվում է Վիեննայի Մխիթարյան միաբանությունը, որը իր գործունեությունը շարունակում է առ այսօր:

**1888** Թիֆլիսում մահացավ հայ նշանավոր պատմավիպասան Ծերենցը՝ Հովսեփ Շիշմանյան: (Ծնվ. 1882թ.-ին, Կ. Պոլսում):

**1908** Կազմակերպվեց Թեհրանի հայոց Ազգային խորհուրդը: 1911 թ. պաշտոնապես ճանաչվեց պետության կողմից և կոչվեց «Թեհրանի հայոց համայնական վարչություն»:

**1948** Մահացավ Հակոբ Օշականը: (Ծնվ. 1883 թ.):

**1992** Ղարաբաղյան ինքնապաշտպանական ուժերը գ ռավեցին ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Ղարադաղլուի ադրբեջանական ռազմական հանգույցը:

**2000** Հայ ազգի հերոս Ջորավար Անդրանիկի աճյունը Փարիզից փոխադրվում է Հայաստան:

**18 փետրվար**

**1853** Ղրիմի Ղարասուբազարում ծնվեց հայ կոմպոզիտոր, խմբավար, երաժիշտ և բանասիվաթ Քրիստափոր Կարա Մուրզան: (Վախճ. 1902թ.-ին):

**1856** Սուլթան Աբդուլ Մեջիդը հրապարակում է Հաթթը Հունայուն կոչվող բարենորոգումների հրովարտակը՝ «Թանգիմաթի» երկրորդ ակտը:

**1856** Ղրիմի պատերազմի ավարտից քիչ անց Թուրքիայի սուլթան Աբդուլ Մեջիդը ստորագրեց հրովարտակ՝ Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների վիճակը բարելավելու մասին: Կայսերական գիրը, որի նպատակն էր Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների օգտին Ռուսաստանի հնարավոր միջամտության կանխումը, բոլորովին չփոխեց հայերի կացությունը:

**1877** Ծնվեց հայ ականավոր գրող, ակադեմիկոս Դերենիկ Դեմիրճյանը: (Վախճ. 1956 թ.):

**1979** Ստեղծվեց «Կիլիկյան ընկերություն» բարեգործական կազմակերպությունը, որի նպատակն էր «Ազգային դաստիարակության ընդհանրացումը Կիլիկիո մեջ»: Հիմնադիրներն էին Մինաս Շերազը, Կարապետ Կարակյանը, Հրանտ Ասատուրը, Հակոբ Նազարյանը և ուրիշներ:

**1918** Երզրում ժամանեց Անդրանիկի փոքրաթիվ զորքը, չկարողացավ դիմակայել թուրքական 25 հազարանոց բանակին և հարկադրված նահանջեց իր հետ Անդրկովկաս հասցնելով Երզրումցի գաղթականների:

**1920** Հիմնադրվեց Հայաստանի կառավարական Կարմիր խաչը:

**1921** Հայաստանում տեղի ուեցավ ապստամբություն բոլշևիկյան կառավարության դեմ:

**1921** Փետրվարյան ապստամբությունն ավարտվեց հաղթանակով:

**1963** Մահացավ Մեծի Տանն Կիլիկիո Զարեհ Ա. կաթողիկոսը:

**1977** Երևանում բացվեց ականավոր գորավար Գայի (Հայկ Բժշկյանցի) արձանը:

**1994** Մոսկվայի պաշտոնական հաղորդագրությունը թողարկեց Հայաստանի, Ադրբեջանի և Արցախի պաշտպանության նախարարների միջև ընթացած բանակցությունները:

**1994** ԼՂՄ ինքնապաշտպանական ուժերը վերագրավեցին Մախորդ տարվա դեկտեմբերին կորցրած Օմարի լեռնանցքը:

**19 փետրվար**

**1869** Լոռում ծնվեց հայ բանաստեղծ, արձակագիր Հովհաննես Թումանյանը: (Վախճ. 1923թ.-ին):

**20 փետրվար**

**1728** Վախճանվեց հայ գորավար Դավիթ Բեկը:

**1862** Վանի զինված պաշտպանությունը թուրքական կառավարության դեմ:

**1904** Թիֆլիսում ծնվեց անվանի ֆիզիկոս, ԽՍՀՄ ակադեմիկոս Աբրահամ Ալիխանովը: 1940 թ. նա կազմակերպել է Էլբրուս լեռան տիեզերական ճառագ այթների հետազոտման առաջին արշավախումբը, այդ բնագ ավառում արել մի շարք հիմնական բացահայտումներ:

**1936** Երևանում վախճանվեց անվանի ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը: (Ծնվ. 1878թ.-ին):

**1988** Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը դիմեց Հայաստանի, Ադրբեջանի և Խորհրդային Միության Գերագույն Խորհուրդներին. «քննարկել և դրական որոշում ընդունել Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանից Խորհրդային Հայաստանի կազմում ընդգրկելու վերաբերյալ»:

**1988** ԼՂԻՄ ժողովրդական դեպուտատների մարզային խորհուրդը որոշում ընդունեց անջատվել Ադրբեջանից և վերամիավորվել Մայր Հայրենիքի՝ Հայաստանի հետ:

**21 փետրվար**

**1944** Իր մարտական ընկերների հետ Փարիզում գնդակահարվեց ինտերնացիոնալ պարտիզանական ջոկատի հրամանատար, կոմունիստ, բանաստեղծ Միսակ Մանուշյանը:

**22 փետրվար**

**1909** Եկատերինոպոլսում (այժմ Կրասնոդար) ծնվել է Խորհրդային բանակի գ եներալ- մայոր Տարաս Թուսուզյանը: Շուրջ 20 տարի՝ 1950-ից 1969 թվականներին եղել է Հայաստանի Հանրապետության զինկոմը:

**23 փետրվար**

**1932** Երևանում լույս է տեսնում Հայաստանի Խորհրդային գրողների ֆեդերացիայի օրգ ան «Գրական թերթ»-ի առաջին համարը:

**24 փետրվար**

**1931** Երևանում վախճանվեց ազգագրագ ետ Երվանդ Լալայանը: (Ծնվ. 1864թ.-ին):

**1932** Ծնվել է ծագումով հայ, ֆրանսիացի կոմպոզիտոր Միշել Լեգրան:

**1938** Երևանում ծնվեց արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր, կինոռեժիսոր Արա Վահունին:

**1975** Վախճանվեց տաղանդավոր նկարիչ Մինաս Ավետիսյանը: Նա սպանվեց Խորհրդային ոստիկանության կողմից: (Ծնվ. 1928)

**25 փետրվար**

**1865** Ծնվեց հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ , գորավար Անդրանիկ Օզանյանը: (Վախճ. 1927թ.-ին):

**26 փետրվար**

**1828** Սկսվում է պարսկահայերի վերաբնակեցումը Արևելյան Հայաստան և Անդրկովկաս:

**1921** Դաշնակցականների հակահեղափոխական խռովության դեմ կռվելու նպատակով Դիլիջանում ստեղծվում է Դիլիջանի և Ղարաքիլիսայի շրջանների ռազմա-հեղափոխական կոմիտե Գ. Աթաբեկյանի նախագահությամբ:

**1988** Հայերի ցեղասպանությունը Սունգայիթում (Այն Ադրբեջանի երրորդ մեծ քաղաքը և երկրորդ մեծ արդյունաբերական կենտրոնն է): Ոճրագործները չեն ձերբակալվել և չեն հետապնդվում: Միխաիլ Գորբաչովը այս ցեղասպանության հարցը փակեց, այն համարելով որպես «մանր խուլիգանության» փաստ:

**1992** ԼՂՄ-ի ինքնապաշտպանական ուժերի փայլուն օպերացիայի շնորհիվ գրավվեց թշնամու պլանցդարմը՝ Խոջալուն:

**27 փետրվար**

**1826** Ծնվեց հայտնի նկարիչ, արվեստի տեսաբան Վարդգես Սուրենյանը: (Վախճ. 1921թ.-ին):

**1833** Հայկական մարզի զինանշանի հաստատումը Նիկոլայ I-ի կողմից:

**1845** Մոսկվայում ծնվեց հրապարակախոս Գրիգոր Արծրունին: (Վախճ. 1892թ.-ին, Թիֆլիսում):

**28 փետրվար**

**1976** Շարք մտավ Հայաստանի ատոմային կայանի առաջին էներգաբլոկը:

**29 փետրվար**

**1880** Նոր Նախիջևանում ծնվեց նկարիչ Սարտիրոս Սարյանը: (Վախճ. 1972թ.-ին):

**1904** Սկսվեց Սասունի հերոսական ինքնապաշտպանությունը: (Տևեց մինչև մայիսի կեսերը):

## Լուրեր

### Իրանահայ համայնք

- ՎԱՐՈՒԺ ՔԱՐԻՄ ՄԱՍԻՅԻԻ «ՎԵՐՋԻՆ ԱՐԱՐԸ»

Ինչպես տեղեկացնում է Իրանահայ ազգային և մշակութային միության «խոսնակ» ամսօրյան, Թեհրանում կայացել է «Օմիդ» փառատոնը, որի մրցույթին մասնակցելու համար ընտրվել էին միջազգային բազմաթիվ փառատոններում մրցանակներ շահած մի շարք ֆիլմեր: Դրանց թվում նաև՝ իրանահայ ռեժիսոր Վարուժ Քարիմ Մասիհիի «Վերջին արար» ֆիլմը: Փառատոնի «Քննադատների տեսակետը» անվանակարգով այն ճանաչվեց Իսլամական հեղափոխությունից հետո Իրանի ֆիլմարվեստի «Սինեմայի» լավագույն կինոնկարը: Քրոջ եւ եղբոր մասին պատմող այս կինոնկարի հիմքում մի թատերգություն է, ըստ որի քույրն ու եղբայրը դավադրություն են կազմակերպում իրենց եղբոր կնոջ դեմ, որը ժառանգել է ընտանիքի ողջ հարստությունը:

Իրանահայ 51-ամյա բեմադրիչ Վարուժ Քարիմ Մասիհիի առաջին կարճամետրաժ ֆիլմը՝ «Կլուն» նկարահանվել է 1975 թվականին: Ապա 1977-ին եւ 1980-ին նկարահանել է եւս 2 կարճամետրաժ ֆիլմ՝ «Գաղթել» եւ «Սալանդար» անվանումներով: 1991-ին նկարահանված «Վերջին արարը» Իրանում մեծ հեղինակություն վայելող «Ֆաջր ֆիլմ» փառատոնի ժամանակ շահել է միանգամից 9 մրցանակ՝ լավագույն ռեժիսուրա, լավագույն ֆիլմ, լավագույն նկարիչ, լավագույն զլխավոր դերասան, լավագույն երկրորդ դերասան, լավագույն օպերատոր, լավագույն ձայնագրում, լավագույն դիմահարդարում եւ լավագույն սցենար անվանակարգերում:

- Իրանահայ Անւանի գեղանկարիչ Երվանդ Նահապետյանի Մեծարանքի Երեկոն՝ Սպահանի Թանգարանում - Իրանահայ գեղանկարիչների ցուցահանդես՝ Սպահանի ժամանակակից արվեստների թանգարանում



Սպահանի քաղաքապետարանի եւ ժամանակակից արվեստների թանգարանի նախաձեռնությամբ 2003 թ. հունվարի 1-16-ին սույն թանգարանում կազմակերպվել է հայ գեղանկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես՝ բաղկացած իրանահայ անւանի իրապաշտ գեղանկարիչ եւ ջրաներկի ակնառու վարպետ Երվանդ Նահապետյանի ստեղծագործություններից, միաժամանակ իրանահայ երիտասարդ սերնդին պատկանող երկու գեղանկարչուհիներ Արմենուի Նահապետյանի եւ Անի Բաբայանի գործերի:

Դեկտ. 31-ի Երեկոյան Սպահանի «Աբբասի»



հյուրանոցում կազմակերպվել է մեծարանքի հանդիսություն Երվանդ Նահապետյանի գեղարվեստական գործունեության պատվին, հիշյալ կազմակերպությունների նախաձեռնութեամբ, որի համար տպագրել է մեծարգոյ վարպետի ջրաներկ աշխատանքների նմուշները պարունակող մի ժողովածու, որին կցւած է արւեստագէտի կենսագրութիւնը:

Երվանդ Նահապետյանը ծնւել է 1916-ին՝ Ն. Ջուղայում արվեստասեր ընտանիքում: Անվանի իրանագետ պրոֆ. Փոփի հրավերով աշխատանքային այցով Սպահան ժամանած հայ նշանավոր նկարիչ Սարգիս Խաչատրյանի մոտ սկսել է նկարչությունը՝ 15 տարեկանից եւ միաժամանակ նկարչության ու ճարտարապետության դասեր առել Իրան այցելած իտալահայ նկարիչ Ալեքսանդր Ներսիսյանից: Պարսկական մանրանկարչության մեջ հմտացել է անվանի վարպետ Հոսեյն Մոսավարլունլըի մոտ:

Ունեցել է բազմաթիւ ցուցահանդեսներ՝ Սպահանում, Թեհրանում եւ Ֆրեզնոյում ( ԱՄՆ): Առաջին մրցանակի է արժանացել Լոնդոնում, ԱՄՆ-ում եւ Ռուսաստանում:

## Իրան

- Իրանի Մշակույթի եւ իսլ. առաջնորդության նախարարության նախաձեռնած Երեկո՝ նվիրված կրոնական փոքրամասնություններին

Իսլ. հեղափոխության հաղթանակի 24-րդ տարեդարձի առթիվ Թեհրանի «Էնդելաբ» հյուրանոցում մշակույթի եւ իսլ. առաջնորդության նախարարության նախաձեռնությամբ, կրոնական փոքրամասնություններին նվիրված միջոցառում կազմակերպվեց:

Ծրագրին ներկա էին մշակույթի նախարար պրն. Մասջեդ Ջամեհին, նույն նախարարության տարբեր



բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես՝ մշակութային հարցերով օգնական Ռամզանյանի, մշակութային հարաբերությունների և կենտրոնների տնօրեն Մաջիդ Սայադին և կրոնական փոքրամասնությունների գրասենյակի պատասխանատու պրն. Թադևիս:

Միջոցառմանը հրավիրած էին Թ. Յ. թեմի և Ատրպատականի հայոց թեմի առաջնորդները, միութիւնների և մամուլի ներկայացուցիչներ, գրողներ, արևեստագետներ, նաև միւս կրօնական փոքրամասնութիւնների հոգեւոր և աշխարհիկ ղեկավարներ:

Միջոցառման ավարտին տեղի ունեցավ ընդունելություն:

- **խորհրդարանը** **Վերջնականապես**
- Վավերացրեց** **Կրոնական**
- Փոքրամասնությունների** **և**
- Մուսուլմանների** **Արյունագնի**
- Համահավասարեցումը**

Իսլ. խորհրդարանը վերջնականապես վավերացրեց երկրի կրոնական փոքրամասնությունների և մուսուլմանների արյունագնի հավասարեցումը:

ԻՌՆԱ-ի հաղորդման համաձայն՝ իրանական 1370 (1991թ.) թականին վավերացված Իսլ. պատժարքի օրենքի համար 297 հոդվածին մի ծանոթագրություն կցվելով, Իրանի Իսլ. Հանրապետության Սահմանադրության մեջ ճանաչված կրոնական փոքրամասնությունների արյունագինը համահավասար է մուսուլմանների արյունագինին՝ հոգեւոր առաջնորդի հայեցողությամբ, որի մասին հարցադրում է կատարվելու դատական ուժի միջոցով և հղվելու է դատարաններին:

Այդ վավերագիրը դատարաններին հարկադրում է, որ հիշյալ կարծիքի համաձայն և նկատի առնելով Իսլ. պատժարքի օրենքի այլ կետերը, ինչպես անձի սեռը և դեպքի ժամանակը, անհրաժեշտ վճիռը արձակեն:

Նշելի է, որ հիշեալ օրենքը, Պահապան խորհրդում վերջնականապես հաստատվելուց հետո, իրագործման ուժ է ստանալու:

## Հայաստան



- **Վախճանվեց** **Լեւոն**
- Հախվերոյանը**

ԵՐԵՎԱՆ, 7 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի ազգային ակադեմիան և Հայաստանի գրողների միությունը խոր վշտով հայտնում են, որ կյանքի 79-րդ տարում վախճանվեց անվանի գրականագետ, ակադեմիկոս, բանասիրական գիտությունների դոկտոր, Պետական մրցանակի դափնեկիր Լեւոն Հախվերոյանը:

ՀՀ վարչապետի որոշմամբ, կազմակերպվել է Լեւոն Հախվերոյանի հուղարկավորության կառավարական հանձնաժողով:

Քաղաքացիական հոգեհանգիստը՝ փետրվարի 8-ին, ժամը 12-ից, ազգային ակադեմիայի նախագահության շենքում:

Հուղարկավորությունը՝ Երեւանի քաղաքային պանթեոնում:

## Լեւոն Հախվերոյան

Ծանր երկարատև հիվանդությունից հետո կյանքի 79-րդ տարում վախճանվեց հայրենի մշակույթի ամենապայծառ ղեկավարներից մեկը՝ ակադեմիկոս, դոկտոր-պրոֆեսոր, արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Լեւոն Հախվերոյանը:

Մեր հասարակայնությանը նա հայտնի էր իբրև ականավոր թատերագետ ու գրականագետ, գիտության կազմակերպիչ, մանկավարժ, փայլուն հրապարակախոս, հայտնի էր այն լայն շառավիղով, որ վկայում էր նրա ակտիվ խառնվածքի ու անհանգիստ բնավորության մասին:

Մեծ էր նրա ավանդը գիտության ասպարեզում: Հատկապես այստեղ էր դրսևորվել նրա վառ անհատականությունը, որի հատկանշական գծերն էին անձի և գործի ամբողջականությունը, հետազոտական նախասիրությունները, նպատակի հստակ ըմբռնումը, բանականի ու հուզականի ներդաշնակ միասնությունը:

Որպես նոր խոսք հայ թատերագիտական մտքի պատմության մեջ ընդունվեց նրա մեծածավալ մենագրությունը՝ «Հայ թատրոնի պատմություն. 1901-1920», որն արժանացավ Հայաստանի պետական մրցանակի: Այս ուսումնասիրությունը, ինչպես նաև նրա աշխատությունները՝ նվիրված Վարդան Աճեմյանին, Սուրեն Քոչարյանին, հայ անվանի դերասաններին, առանձնանում են նյութի լայն և բազմակողմանի ընդգրկմամբ, թատերագիտական հմուտ վերլուծություններով, ընտիր հայերենով:

Հայ բանասիրության մեջ իբրև խոշոր ներդրում է ճանաչվել Հախվերոյանի «Թունանյանի աշխարհը» ուսումնասիրությունը: Գրականության դասականի գեղարվեստական աշխարհի խորագնին վերլուծությունն այս գրքում առաջադրեց մի նոր հայացք թունանյանի անձի և ստեղծագործության նկատմամբ, ընդլայնեց նրա գրաված տեղը հասարակական գիտակցության մեջ: Թունանյանական թեմային նա հավատարիմ մնաց նաև հետագա տարիներին: Վերջերս լույս տեսած «Թունանյանը և իր ժամանակը» գրքում և «Մեծերի մեծերի մասին» ժողովածուում, ինչպես և ուրիշ գործերում, արվեստագետի խորաթափանց միտքը համարվում է մեր ժամանակի հոգսերով և շահերով ապրող հեղինակի հասարակական պաթոսի հետ:

Երջանիկ ճակատագիր ունեցավ Հախվերոյանի «Ձրույցներ լեզվի մասին» գիրքը, որն արդեն երեք հրատարակություն է ունեցել (1982, 1986, 1993): Պարզ ոճով, բայց լեզվագիտական ստույգ սկզբունքներով գրված «Ձրույցները» շատ շուտով սեղանի գիրք դարձան ուսուցիչների և բոլոր տարիքի մարդկանց համար, ովքեր սիրում են հայոց լեզուն և մտահոգված են նրա ներկա վիճակով: Նույն երջանիկ ճակատագիրն է ունեցել նրա «Պարույրը» խոհագրությունը՝ գրված անկեղծ ոգեշնչումով և ստուգապատում գրչով:

Լեւոն Հախվերոյանի ելույթները մամուլում և ամբիոնից մշտապես գրավում էին հասարակության ուշադրությունը, շատ հաճախ կրելով ժամանակակից մշակույթի, լեզվի հրատապ հարցերի շուրջ բանավեճեր բացողի առաքելություն:

Մեծ էր նրա վաստակը որպես Արվեստի ինստիտուտի տնօրեն: Ստանձնելով այդ պաշտոնը 1987թ., ստեղծված դժվարին պայմաններում նա կարողացավ ոչ միայն պահպանել ազգային արվեստաբանության արժեքավոր ավանդույթները, այլև նոր լիցք հաղորդեց ինստիտուտի գործունեությանը:

Բնությունից նա իբրև պարզե ստացել էր

բացառիկ տաղանդ, ուսանելի աշխատասիրություն, ջերմ ու բարի սիրտ, վայելում էր շրջապատի, ավելին մեր ժողովրդի լայն զանգվածների սերն ու հարգանքը: Սիրված եւ ճանաչված էր նաեւ Սփյուռքում, սերտ բարեկամական կապեր ուներ արվեստի ու գրականության սփյուռքահայ գործիչների հետ: Հասարակական լայն արձագանք են ստացել նրա դասախոսությունները Լիբանանում, Սիրիայում, Հնդկաստանում, ԱՄՆ-ում:

Լեւոն Հախվերդյանի գործն ու կերպարը միշտ անմոռաց կմնան մեր սրտերում, հայրենի մշակույթի անդաստանում:

**• ՅՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ ԵՎ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ, ԷԼ ԻՆՉ ՍՈՒՐԲ ՎԱԼԵՆՏԻՆ**

Մամուլը, հեռուստատեսությունը, ռադիոն անընդհատ խոսում են Սուրբ Վալենտինի տոնի մասին: Ինչևէր շուրջներ են կազմակերպվում այդ օրվա ամբողջ: Մեզ խորթ, նոր եւ նորածեւ մի տոն, որն, իբր, նշում են ամբողջ աշխարհում: Սակայն զարմանալիս այն է, որ մենք, ունենալով Տյառնընդառաջ եւ Սուրբ Սարգսի տոները, դրանք անտեսում ենք՝ նորահայտ Ս. Վալենտինի տոնը մեզանում արմատավորելով: Տյառնընդառաջն իր էությանը նաեւ սիրո տոն է, քանզի սիրող զույգերի՝ նորապսակների տոն է: Հայ ավանդական հասարակության մեջ սերն անմիջականորեն առնչվում է ընտանիքին, հետեւաբար սիրո այդ տոնը պիտի կոչվեր նորապսակների տոն: Իհարկե, տոնի շրջանակներում այլ արարողություններ, ծեսեր էլ են կատարվում, որոնք, կարծես թե, չեն առնչվում սիրահար զույգերին, սակայն դրանք հասարակությանը չար ուժերից հեռու պահելու համար են: Չէ՞ որ որքան հասարակությունն ամռոջ, ապահովված եւ բարեկեցիկ լինի, այնքան լավ նախ եւ առաջ նորապսակների (սիրող զույգերի) համար: Այսինքն տոնի շրջանակներում ինչ էլ որ արվում է, դրական դաշտ ստեղծելու համար է: Մյուս տոնը՝ Սուրբ Սարգսի տոնը, անմիջականորեն առնչվում է սիրահարներին, այն էլ այնպիսի գեղեցիկ արարողություններով, ինչպիսիք են մերաջրով փոխինդ պատրաստելը, երիտասարդների՝ աղաբլիթ ուտելը, գիշերը երազում սիրած մարդուն, ապագա ամուսնուն տեսնելը եւ այլն: Մանավանդ, որ շատերը պնդում են, թե երազում տեսել են ապագա փեսացուին: Ավելացնենք նաեւ Ս. Սարգսին առնչվող ավանդույթները:

Ի տարբերություն այլ ազգերի, մենք կարող ենք սիրահարների տոնը նշել երկու անգամ՝ Տյառնընդառաջին (փետրվարի 13-14, Սուրբ Վալենտինի օրը՝ փետրվարի 14) եւ Ս. Սարգսի տոնին: Էլ մեր ինչի՞ն է պետք Ս. Վալենտինի տոնը: Մնում է այս մասին հիշեցնել երիտասարդներին, որպեսզի ազգայինը թողած օտարի հետեւից չվազեն: Յուրաքանչյուր հայ երիտասարդի համար կարելորդ ընտանիքն է, յուրաքանչյուրը երազում է լավ ընտանիք կազմելու մասին: Իսկ Տյառնընդառաջ եւ Ս. Սարգսի տոները սիրո տոներ լինելով, հարմարեցված են հայի մտածողությանը: Գուցե վերջին շրջանում հայ երիտասարդներն արդեն «արեւմտյան բարբերով» են վարակվել: Այդ դեպքում նրանց միայն Ս. Վալենտինի տոնն է հարկավոր եւ ուրիշ ոչինչ:

**• Հայաստանը դարձավ Առեւտրի համաշխարհային կազմակերպության 145-րդ անդամը**

ԺՆԵՎ, 5 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր Հայաստանը դարձավ Առեւտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) 145-րդ լիիրավ անդամը:

Հայաստանը ԱՀԿ-ին անդամակցելու հայտագիր էր ներկայացրել տակավին 1993 թվականին: Գրեթե տասը տարի պահանջվեց հանրապետության օրենսդրությունը եւ տնտեսական ցուցանիշներն Առեւտրի համաշխարհային կազմակերպության

պահանջներին համապատասխանեցնելու համար: Այսպիսով Հայաստանը դարձավ ԱՀԿ-ի մեջ մտած յոթերորդ նախկին խորհրդային հանրապետությունը: Ներկայումս Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամակցելու են ձգտում եւս 26 երկրներ:

**• ԼՂՀ-ում 2003 թ. հունվարի 1-ի դրությամբ ապրում է 145 հազար 298 մարդ**

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 6 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ըստ ԼՂՀ ազգային վիճակագրական վարչության տվյալների, հանրապետության բնակչության թիվը 2003թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 145 հազար 298 մարդ: Այդ ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 1.623-ով կամ 1,1 տոկոսով: Բնակչության թվաքանակի աճ է գրանցվել ԼՂՀ բոլոր շրջաններում: 2002թ. հանրապետությունում ծնվել են 2.190 երեխա: Բնակչության շրջանում ընդհանուր մահացածությունների թիվը կազմել է 1242: Բնական աճը կազմել է 948 մարդ, մեխանիկական աճը՝ 675:

**• ԱՎԵԼԻ ՇԱՏ ԾՆՈՒՆԴ ԵՎ ԱՄՈՍՆՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ, 13 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: 2002 թվականին Երեւանում գրանցվել է 9333 ծնունդ, 2654 պսակադրություն, 8392 մկրտություն, 4860 ամուսնություն եւ 1008 ամուսնալուծություն: Ինչպես նշվեց հունվարի 13-ին քաղաքապետարանում կայացած խորհրդակցությանը, ծնունդների եւ ամուսնությունների թիվը մայրաքաղաքում 2001 թ. համեմատ աճել է համապատասխանաբար 969-ով եւ 330-ով, իսկ պսակադրությունների, մկրտությունների եւ ամուսնալուծությունների ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 52-ով, 1448-ով եւ 51-ով:

**• ԸՍՏ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ՝ ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՐՋ 3 ՍՆԵ Է**

Նոր մարդահամարի նախնական արդյունքների համաձայն, ըստ վիճակագրական ծառայության մարդահամարի եւ ժողովրդագրության բաժնի պետ Կարինե Կույունջյանի, Հայաստանում մշտական բնակչության ցուցանիշը 3,2 մլն է, առկա բնակչությանը՝ 3 մլն: Չնայած գիտնականներն իրենց ուսումնասիրություններում եւ փորձագիտական հաշվարկներում շատ ավելի փոքր թիվ են նշում Հայաստանի այսօրվա բնակչության համար:

Ինչեւէ, տկն Կույունջյանը նշեց, որ մարդահամարի պաշտոնական, վերջնական տվյալները զգալի տատանումներ չեն գրանցի նախնական 3,2 միլիոնի համեմատ, որ, փաստորեն, աննշան է տարբերվում 1979-ի՝ 3,4 միլիոնից: Սակայն այդ դեպքում ընտրելու ենթակա բնակչության թիվը կապահանջվի՞ 70 տոկոսի սահմաններում, թե՞ ոչ, տկն Կույունջյանը պատասխանեց, թե վերջին տարիներին ժողովրդագրական լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել եւ դժվար է զուգահեռ անցկացնել:

**• ԼՈՒՍԻՆՅԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ՝ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԿԻՊՐՈՍՈՒՄ**

Լուսինյան գերդաստանը, որ Կիպրոսում իշխել է 1192 թ.-ից մինչեւ 1489 թթ., կառուցել է 3 պալատ: Նրանցից երկուսը հայտնի էին, իսկ առաջինի տեղը գաղտնի է եղել: Երկրորդ պալատից՝ կառուցված գոթական ոճով, մնացել է միայն մի փոքր հատված: Ավերվել է XV դարում ենթարկվելով եգիպտական մամլուքների ասպատակություններին: Երրորդ պալատը 1904-ին, փլուզման վտանգի պատճառով, քանդել են բրիտանացիները:

Նիկոսիայի քաղաքապետարանի ապագա կառուցվելիք շենքի շինարարական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են հին կառույցի բեկորներ: Ենթադրվում է, որ դրանք Լուսինյանների կառուցած առաջին պալատի մնացորդներն են: Հնագետները հայտնաբերել են 4 մետր բարձրությամբ

պատ, որմնանկարների կտորներ, ժանգոտած սուր, խեցեղենի բեկորներ եւ Լուսինյաններին պատկանող դրամներ:

**• ԱՂՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԸ ԽԱՍՏԵԼ ԵՆ ԼՂՅ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՍԱՅՄԱՆԸ**

ԵՐԵՎԱՆ, 10 ՅՈՒՆԻՎԱՐ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Յունվարի 8-ին Լեռնային Ղարաբաղի Յանրապետության զինված ուժերի եւ Աղրբեջանի շփման զծի Աղղանի ուղղությամբ, հատվածում աղրբեջանական հետախուզական զորքերի խումբը խախտել է ԼՂՅ պաշտպանական սահմանը: Ինչպես հայտնեցին Յայաստանում ԼՂՅ ներկայացուցչությունում, մարտական հերթապահություն իրականացնող ԼՂՅ ՊԲ զինծառայողները ձեռնարկել են անհրաժեշտ միջոցառումներ խմբի վնասագերծման համար: Աղրբեջանական զինծառայողներից մեկը վիրավորվել է եւ գերի ընկել: Նրան շտապ ցուցաբերվել է առաջին բուժօգնություն, որից հետո տեղափոխվել է հոսպիտալ: Մյուս դիվերսանտներին հաջողվել է փախվել: Միջադեպի մանրամասները ճշգրտվում են: Դեպքի մասին իրազեկվել են ԼՂՅ-ում հավատարմագրված միջազգային Կարմիր խաչի եւ ԵԱՀԿի ներկայացուցիչները: Ի դեպ, երեկ Աղրբեջանի պաշտպանության նախարարությունն այս առնչությամբ տարածել է հերթական ապատեղեկատվությունը, հայտարարելով, թե Ն զորամասի 2 զինծառայողներ դարանակավել են հայերի կողմից եւ ընկել նրանց կրակի տակ: Ըստ աղրբեջանցիների, էլ մադին Աբեւը, որը պիտի զորացրվեր այս գարնանը, գերվել է հայերի կողմից, իսկ Շահին Աբղուռահանովը, որն առաջին տարվա ծառայող է, վիրավորվել է, եւ զինվորական հիվանդանոցում նրան բուժօգնություն է ցույց տրվել:

# Շայոց Սփյուռք

**• ՎԵՐՋԻՆ ՅԱՅԸ ԲԱՆՂԱՎԵՐՈՒՄ**  
*Շայոց եկեղեցու ապագան վտանգված*

Յունվարի 10-ին BBC ռադիոկայանը հաղորդում է նվիրել Բանգլադեշի մայրաքաղաք Դաքայում մնացած վերջին հայի՝ Մայքլ Ջոզեֆ Մարտինի (Միքայել Յովսեփի Մարտիրոսյանի) մասին: Նա միակ խնամատարն է 18-րդ դարում կառուցված Սուրբ Յարություն հայկական եկեղեցու: Այս մասին մեզ տեղեկացնող Լուս Անջելեսից «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի խմբագիր Յարութ Սասունյանը հայտնում է, որ պրն Մարտինը BBC-ի թղթակցին ասել է, թե ինչ էլ պատահի ինքը չի լքելու եկեղեցին, չի թողնելու, որ այն վերածվի ավերակի: «Թերեւս ես Բանգլադեշում ապրող միակ հայն եմ, սակայն իմ կարողությունների սահմաններում ամեն ինչ անելու եմ, որպեսզի արտասահմանից մի հայ գտնեմ, որպեսզի ինձ փոխարինի: Այլապես մեկ օրից մյուսը մի ողջ ավանդույթ անհետ կորչելու է»:

BBC-ի թղթակցի ասելով Դաքայի հայոց եկեղեցին շատ գեղեցիկ մի կառույց է, որ գտնվում է Յայկական փողոցում, որը ժամանակին հայերի կողմից երկրում զարգացող առեւտրի կենտրոնն էր: Առաջինը հայերն այստեղ են հայտնվել 12-րդ դարում: Նրանք կարեւոր դեր են կատարել Եվրոպայի հետ Բենգալի առեւտրային կապերի զարգացման գործում:

Մեր կողմից ավելացնենք, որ Դաքայի Սբ. Յարություն եկեղեցին գտնվում է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հոգեւոր ենթակայության տակ: Ակնկալելի է, որ Մայր աթոռն ամեն ինչ կանի եկեղեցու ճակատագիրն ապահով հիմքերի վրա դնելու ուղղությամբ:

Դառն իրականություն է. սա է լինելու սփյուռքի վերջնական ճակատագիրը:

**• ԿԱՏԱՐ ԽԱՉԻԿՅԱՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ**

ՍՈՖԻԱ, 31 ՅՈՒՆԻՎԱՐ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Սոֆիայի 25-րդ ընտրատարածքից Բուլղարիայի խորհրդարանի անդամ է ընտրվել 24-ամյա Կատար Խաչիկյանը: Բուլղարիայի պառլամենտում նա ամենաերիտասարդ պատգամավորն է:

Կ. Խաչիկյանը ծնվել է Սոֆիայում, ավարտել է մայրաքաղաքի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Կատարելագործվել է Գերմանիայում, ԱՄՆ-ում: Մինչ խորհրդարանի անդամ ընտրվելը, վարել է երկրի նախարարների խորհրդին կից պառլամենտական քարտուղարի պաշտոնը: Նա ակտիվ գործունեություն է ծավալում նաեւ բուլղարահայ գաղութում. Սոֆիայի բարեգործական վարչության անդամ է:

Բուլղարիայի ներկա՝ 39-րդ, գումարման խորհրդարանի անդամ է նաեւ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, բուլղարահայ թեմական խորհրդի անդամ Ռուբեն Գրիգորյանը:

Յատկանշական է, որ երկու հայ պատգամավորներն էլ ընտրվել են ոչ թե որպես հայ համայնքի ներկայացուցիչներ, այլ առաջադրվել են լծագավորական շարժման կողմից, որը 2002 թ. կին մեղաձևվել է կուսակցության եւ ներկայումս բուլղարական խորհրդարանում մեծամասնություն է կազմում:

**• ԷԼԻՋԱԲԵԹ ԹԱԳՈՒՇՈՒ ՅՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՍԵՂԱԸ՝ ՏԻԿԻՆ ԱՐՄԻՆԵ ԱԹԹԱՐՅԱՆԻՆ**

Դեկտեմբերին կանադական կառավարությունը Մոնրեալի ՅԲԸ Միության մշակութային հանձնախմբի նախագահ տիկին Արսինե Աթարյանին շնորհել է «Էլիզաբեթ Բ թագուհու հորելյանական ոսկե մեդալը»՝ ի գնահատանք հանուն հայ համայնքի բարգավաճմանը նրա կատարած գործունեության: Այս մասին էլ. փոստով ստացված



հաղորդագրությունը տեղեկացնում է, որ Արսինե Աթարյանը ՅԲԸՄ անդամ է 1953-ից սկսած: Մարդու իրավունքների պաշտպանության, կանանց խնդիրների պարզաբանումների, գրական եւ մշակութային ասպարեզներում ցուցաբերած իր անխոնջ մասնակցության եւ նվիրվածության համար նա համապատասխան ճանաչում է ձեռք բերել ինչպես Կանադայում, այնպես էլ Լիբանանում եւ Յայաստանում: Նա նաեւ կանադահայ կանանց ասոցիացիայի փոխնախագահն է, ակտիվ մասնակցություն է ունեցել Կանադայում հայկական ֆիլմերի առաջին փառատոնի կազմակերպմանը, Մոնրեալի ստամբուլահայ համայնքի Արան հաշատյանի անվան երաժշտական տան խորհրդատվական վարչության անդամ է: Նյու Յորքում մասնակցել է ՄԱԿի ոչ կառավարական կազմակերպությունների բազմաթիվ համագումարների:

**• Լիբանանում հայկական Սուրբ Ծնունդը հռչակվել է պետական տոն**

ԱՆԹԻԼԻԱՍ, 8 ՅՈՒՆԻՎԱՐ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Լիբանանի կառավարության հատուկ որոշմամբ, հունվարի 6-ը՝ հայկական Սուրբ Ծնունդը, հայտարարվել է պետական պաշտոնական տոն: Ինչպես տեղեկացնում է Մեծի տան Կիլիկիո կաթողիկոսության մամլո դիվանը, այդ օրը պետական բոլոր գրասենյակների, դպրոցների, պաշտոնական հաստատությունների համար այսուհետեւ լինելու է հանգստյան օր:

• **ՎԱՆՃԱՆՎԵՑ ՎԱՅԵ ՔԱՉԱՆ**

Հունվարի 14-ին վախճանվել է օտարալեզու հայ ամենանշանավոր գրողներից մեկը՝ Վահե Քաչան, 75 տարեկանում: Անվանի արձակագիրը ծնվել է 1928 թ. Դամասկոսում, Խաչատուրյանների ընտանիքում: Մանուկ հասակից տեղափոխվել է Բեյրութը, Լիբանան, որտեղ ստացել է միջնակարգ կրթությունը: 1945 թ. որպես «Սուար դը Բեյրութ» թերթի թղթակից մեկնել է Փարիզ, որտեղ միաժամանակ հետեւել է ժաննՔրիստոֆ Ավերտիի անվան կինեմատոգրաֆիայի ինստիտուտի դասընթացներին: Ավարտելուց հետո տպագրվել է նրա առաջին վեպը՝ «Կիրակի օրվանից մնացած գլանակներ»: Սակայն հեղինակին իսկապես հաջողություն է բերել «Ակն ընդ ական» շերտ վեպը, որն արժանացել է «Ռիվոլյու» մրցանակի: Այնուհետև հաջորդաբար հրատարակվել են Քաչայի «Կարթ», «Սեղմված բռունցքներ», «Արարչի ութերորդ օրը», «Գիշատիչների խրախճանքը», «Գավազան», «Կապիկների նավը», «Հրեայի մահը», «Մի մարդ ընկավ փողոցում», «Աղմուկ, որ լսվում էր» վեպերն ու վիպակները, որոնց մեծամասնությունն էկրանավորվել է: Քաչայի սցենարով գրված «Մանգադ» ֆիլմն արտադրվել է ամերիկյան MGM ընկերության կողմից: Մեծ հաջողություն է արձանագրել Անրի Վեռնոյի բեմադրությամբ ել ժաննՊոլ Բելմոնդոյի դերակատարմամբ Վահե Քաչայի «Կործանում» կինոժապավենը: Հայազգի գրողին մեծագույն փառք է բերել «Մի դաշույն այս պարտեզի մեջ» վեպը, էպիկական լայն շնչի ծավալուն մի ստեղծագործություն, որը ներկայացնում է Դուրյան ընտանիքի կյանքը Մեծ եղեռնի ընթացքում եւ այնուհետև:

Բացի հայերենից, Վահե Քաչայի երկերի մեծ մասը թարգմանվել է բազմաթիվ լեզուներով, այդ թվում՝ ռուսերեն:

• **ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՄՐՑԱՆԱԿԸ՝ ՀԱՅԱԶԳԻ ՀԱԿՈՐ ԱԿԻՍԿԱԼԻՆ**

Հոգեբանության համաշխարհային ասոցիացիան (ՀՀԱ) Ձին Դիլեյի անվան իր բարձրագույն մրցանակն անցյալ տարի շնորհել է Սան Դիեգոյի Կալիֆոռնիա համալսարանի «Տրամադրության միջազգային կենտրոնի» տնօրեն եւ հոգեբանության դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Սուրենի Ակիսկալին: Այս մասին է գրում «Արմինյն միտթ սփեքթեյթը» շաբաթաթերթը, հավելելով, որ նրա թեկնածությունն առաջադրել են Ֆրանսիայի, Պորտուգալիայի եւ ճապոնիայի ներկայացուցիչները, թեկնածությունը միաձայն պաշտպանել է 11 հոգուց բաղկացած հատուկ ժյուրին. Յոկոհամայում (ճապոնիա) կայացած ՀՀԱ-ի 12-րդ համաշխարհային Կոնգրեսի օրերին 7 հազար գիտնականների, ճապոնիայի գահաժառանգ իշխան Նարուհիտոյի եւ տիկնոջ իշխանուհի Մասակոյի ներկայությամբ մրցանակը հայազգի պրոֆեսորին է հանձնել ՀՀԱ-ի նախագահ, իսպանացի պրոֆեսոր ԼուպեսԻբորը:

Հակոբ Ակիսկալի ծնողները պատմական Հայաստանից են: Ինքը ծնվել է Բեյրութում եւ ավարտել 1961-ին ՀԲԸՍ-ի տեղի Հովակիմյան-Մանուկյան վարժարանը: Պատանեկան տարիներին արձակ նյութեր եւ բանաստեղծություններ է տպագրել «Շիրակ» եւ «Ահեկան» գրական պարբերականներում: Այնուհետև խմբագրել է «Մեդիկոս» բժշկական ամսագիրը: Բժշկության բնագավառում իր թեկնածությունն է պաշտպանել 1969-ին եւ հոգեբանության մեջ մասնագիտացել Թենեսիի եւ Վիսկոնսինի համալսարաններում (ԱՄՆ)՝ հասնելով պրոֆեսորի աստիճանի: Այնուհետև դարձել է «Տրամադրության խախտումների ծրագրի» տնօրենը՝ միաժամանակ համակարգելով իր գործունեությունը Մեմֆիսի բալտիստական

հիվանդանոցի «Քնի խախտումների ծրագրի» կենտրոնի հետ: Դեռ 1981-ին նա «Մ. Նահանգների 15 լավագույն հոգեբանների» ցուցակում էր: 1190-94 թթ. նա ծառայել է որպես «Մտավոր առողջության ազգային ինստիտուտի» (Վաշինգտոն) տնօրենի ավագ գիտական խորհրդատու: 1997-ին նա հատուկ խորհրդականի պաշտոնն է զբաղեցրել առողջապահության համաշխարհային կազմակերպությունում (ժնե, Շվեյցարիա): Համագործակցել է համանման հոգեբանական կենտրոնների հետ Փարիզում, Լիսաբոնում, Իտալիայում, Գերմանիայում, Բուդապեշտում, Տոկիոյում, Կահիրեում, Ռիո դե Ժանեյրոյում եւ այլուր: Նրա թեկնածությունը պաշտպանող նամակներից մեկում նշվում էր, որ «ֆրանսիական հոգեբանությունը ամբողջովին ակիսկալացված է»: Նա հեղինակ է 400 գիտական աշխատությունների եւ 16 գրքերի, ինչպես նաեւ ավելի քան 100 հոդվածների ամերիկյան, ֆրանսիական եւ քրիստոնական հանրագիտարաններում: Ընդգրկվել է 25 ազգային եւ միջազգային հոգեբանական պարբերականների խմբագրական կազմում: 1988-ի երկրաշարժից հետո կնոջ Քնարիկի հետ հոգեբանական վերականգնողական առաքելությամբ աշխատել է Հայաստանում:

**Միջազգային**

• **ՂԱՐԱԲԱԴԻ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՂԻԲԵԶԱՆԻՆ ՀՅՈՐ ԲԱՆԱԿ Ե ՊԵՏԲ**

*Բարվում ասել է թուրք գեներալը*  
ԲԱՔՈՒ, 9 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիելի եւ Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի հետախուզական վարչության պետ, գեներալ Հուսեյն Գոքսունի համդիպման ժամանակ, վերջինս՝ անդրադառնալով դարաբաղյան հակամարտության կարգավորման հարցին, ասել է, թե այդ խնդրի լուծման համար Ադրբեջանը պետք է հզոր բանակ ունենա եւ որ Թուրքիան միշտ էլ օգնելու է Ադրբեջանին այդ հարցում: Նա կողմ է արտահայտվել ադրբեջանա-թուրքական ռազմական համագործակցությանը:

Ադրբեջանական «525-րդ» թերթը գրում է, որ ադրբեջանցի նախարարն իր հերթին հիշեցրել է, որ անցյալ դարի 90-ական թվականներից սկսած Թուրքիան ակտիվորեն օգնում է Ադրբեջանին ռազմական շինարարության գործում, եւ այդ համագործակցությունն այժմ հասել է ռազմավարական համագործակցության մակարդակին: Աբիելի խոսքերով, Կրաստանից ռուսական ռազմահանձրվանի Հայաստան տեղափոխումը «ամրապնդում է Հայաստանի ապակառուցողական դիրքորոշումը եւ հակասում է ԵԱՀԿ ստամբուլյան զազաթաժողովի որոշմանը»: Աբիելն ասել է, թե այդ օգնությունը Հայաստանին «անտեղի կորչում է», քանի որ Հայաստանը «անապագա եւ ահաբեկչական պետություն է»:

• **ԱԹԱԹՈՒՐՔԻՆ ԳՈՎԱԲԱՆԱԾ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ Ե ԽՆԴՐՈՒՄ**

ԿՈՒՈՒՄԲԻԱ, 28 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հարավային Կարոլինա նահանգի նահանգապետ Մարկ Սանֆորդը ներողություն է խնդրել Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի հասցեին դրվատանքի խոսքեր ասելու կապակցությամբ: Մասնավորապես իր ելույթներից մեկում նա Աթաթուրքին որակել է որպես մեծ բարեփոխումներ անցկացրած: Հասարակական լայն դժգոհության արդյունքում, ըստ նահանգային



«Ավգուստա Քրոնիքլ» հանդեսի, նահանգապետը ընդունել է իր սխալը: «Աթաթուրքը մեղավոր է անցած դարասկզբին միլիոնավոր քրիստոնյաների՝ հայերի եւ հույների մահվան համար», նշում է աղբյուրը:

**• ԿԻՊՐՈՍԻ ԹՈՒՐԵՐԸ ՊԱՅՄԱՆՁՈՒՄ ԵՆ ՎԵՐԱՄԻՆԱԿԱ ԻՐԵՆՑ ԳՈՒՅՆ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ**


Աննախաղեպ հանրահավաք տեղի ունեցավ երեկ Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայի գրավյալ հատվածում: Շուրջ 60 հազար ցուցարարներ, քաղաքը բաժանող «կանաչ գծի» դիմաց, պահանջեցին կղզու երկու հատվածների վերամիացում, տեղեկացնում է Կիպրոսից «Ազգի» հատուկ թղթակից Ջորջ Տերևարթոյը: Ցուցարարները պահանջում էին նաեւ իրենց համայնքի ղեկավար Ռաուֆ Դենքթաշի հրաժարումը:

Հատկանշական է, գրում է մեր թղթակիցը, որ այս անգամ կիպրոսցի թուրք ցուցարարների ձեռքին կային Կիպրոսի Հանրապետության դրոշմեր, եւ թուրքական ոչ մեկ դրոշակ չէր ծածանվում: 1974 թ.-ից ի վեր, երբ թուրքական բանակը ներխուժեց կղզի եւ գրավեց նրա տարածքի 37 տոկոսը, սա նման առաջին դեպքն է:

Հատկանշական է նաեւ հանրահավաքի ժամանակացույցը. չորեքշաբթի օրը Կիպրոսի Հանրապետության նախագահ Գլավկոս Քլերիդեսը հանդիպում է ունենալու Դենքթաշի հետ, ճիշտ «կանաչ գծի» վրա, հովանավորությամբ ՄԱԿ-ի հատուկ բանազմաց, պերուվիացի դիվանագետ Ալվարո դե Սոտոյի: Վերջինս փորձելու է Դենքթաշին համոզել ընդունել գլխավոր քարտուղար Կոֆի Անանի առաջարկած խաղաղության եւ վերամիավորման ծրագիրը: Ակնկալվում է, որ ՄԱԿ-ի ներկայացուցիչն առաջարկի հանրաքվե անցկացնել կղզու գրավյալ մասում:

**• ՊԱՊԸ ՓՈՐՉՈՒՄ Է ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԵՐ ԳՏՆԵԼ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԵՏ**

Հունվարի 27-29-ը Վատիկանում կաթոլիկ եկեղեցու գերագույն առաջնորդ Հովհաննես Պողոս Բ-ն եւ այլ բարձրաստիճան եկեղեցականներ հանդիպումներ են ունեցել հայկական եկեղեցու եւ հարակից արեւելյան ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների հետ: Քննարկվել են քրիստոնեության երկու ճյուղերի հարաբերություններն առավել սերտացնելու խնդիրները, տեղեկացնում է էլ. փոստով ստացված հաղորդագրությունը:



Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի խնդրանքով Հայ եկեղեցին ներկայացրել է Ամերիկայի Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, որը Մ. Նահանգներ վերադարձին նշել է. «Մենք մեկ ընտանիք ենք, եւ բոլորս աշխատում ենք զովաբանել Աստծուն ու տարածել նրա խոսքը հավատացյալների շրջանում: Որպեսզի առավել հզորացնենք մեր կապերը, պետք է ավելի խորը հասկանանք միմյանց»:

Հանդիպումները, որոնց մասնակցել են ղապիների, Սիրիայի, Եթովպիայի, Էրիթրեայի եւ Մալանկարայի (Հնդկաստան) ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչները, մաս են կազմել երկխոսություն ծավալելու միջազգային համատեղ հանձնախմբի նախապատրաստական միջոցառումներին:

«Սա ոչ առաջին, ոչ էլ վերջին հանդիպումն է: Նախորդ տարիներին շատ նվաճումներ ենք ունեցել,

բայց ավելի շատ բան ունենք անելու առաջիկա տարիներին», ասել է քրիստոնեական միասնության խորացման հայրապետական խորհրդի նախագահ, կարդինալ Ուոլտեր Կասպերը:

Ըստ հաղորդագրության, հունվարյան հանդիպումների ժամանակ կոնկրետ հանձնարարություններ են տրվել մեթոդական ուղեցույց, ինչպես նաեւ աշխատանքային ժամանակացույց մշակելու: Առաջիկա հանդիպումը նախատեսվում է 2004 թ. հունվարին:

**• ԹՈՒՐԵԿԱՆ ԶԻ՞ ԺՆՏԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, 29 ՀՈՒՆՎՈՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆԵ Ե ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆ: Եվրախորհրդի եւՎ հունվարի 27-ի լիազումար նիստում պատասխանելով ֆրանսիական պատվիրակության անդամ Ֆրանսուա Ռոշբլանի այն հարցին, թե Թուրքիան որպես ԵՄ անդամ դառնալու ցանկություն ունեցող երկիր պատրաստ է ճանաչել եւ ընդունել Հայոց ցեղասպանությունը, Թուրքիայի վարչապետ Աբդուլլահ Գյուլն ասել է. «Այս հարցին կարելի է մոտենալ տարբեր կողմերից: Այն ժամանակ պատերազմ էր, եւ թուրքերը չէին ցանկանում մարդկանց կոտորել: Հիմա հարկավոր է մտածել ապագայի մասին, ապագա հարաբերությունների մասին եւ դա է պատճառը, որ Թուրքիան օգնում է Հայաստանին ու հաճախակի թռիչքներ կան Ստամբուլից Երեւան: Թուրք գործարարներն օգնում են Հայաստանին: Կարծում են, որ Հայաստանը նույնպես կանենում է լավ հարաբերություններ ունենալ սահմանակից երկրների հետ: Վերջապես Հայաստանը պետք է ճանաչի հարեւան երկրների սահմանները: Մենք օգնում ենք նրանց, եւ դա կշարունակվի: Այլեւս դեպի անցյալը գնալու կարիք չկա: Եկեք նայենք դեպի ապագան՝ ավելի լավ հարաբերությունների սպասումով»:

**• ԳԼԽԻ ԵԶՎԿԻ ՎԻՐԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄՆ-ՈՒՄ**

Արիզոնայի նահանգի Ֆինիքս քաղաքի Բերրոու Նյարդաբանական ինստիտուտի բժիշկները հաջողությամբ իրականացրել են եզակի վիրահատություն. նրանք տեղում վերականգնել են ավտոմեքսից փաստորեն պոկված գլուխը:

Ամիսներ առաջ պատահած ողբերգության մանրամասնությունները նոր են հայտնի դարձել: ABC հեռուստաընկերության հաղորդման համաձայն, 18-ամյա Մարկոս Պառայի ավտոմեքենային ամբողջ թափով բախվել է մեկ ուրիշ մեքենա, որի վարորդը բերած էր: Դեպքից անմիջապես հետո Մարկոսին հասցրին Ֆինիքսի Սք. Նոզեֆի հիվանդանոց: Ջարդված էին նրա անրակը, կոնքը եւ կողերը, իսկ գլուխը գրեթե լիովին պոկված էր պարանոցից:

Վթարի պահին վզի փափուկ հյուսվածքները չէին դիմացել սաստիկ հարվածին եւ կտրվել էին: Սակայն զարկերակները դիմացել էին. թեեւ զանգն անջատվել էր ողնաշարի պարանոցային հատվածից, ողնուղեղը չէր տուժել եւ նյարդաթելերը չէին խզվել:

Այս առումով Մարկոսի բախտը բերել էր: ABC-ն կարծիք է հայտնել, թե նրա ճակատագիրը միանգամայն կարող էր եկրանավորման թեմա դառնալ Հոլիվուդում: Բանն այն է, որ եզակի վիրահատությունն իրականացրած պրոֆեսոր Քերտիս Դիքմանն անցյալում երկար ժամանակ մշակել էր սեփական գործողությունները, ճիշտ է՝ դիակների վրա: Իսկ Մարկոս Պառան դարձավ նրա առաջին հիվանդը, որի համար եզակի վիրահատությունը փրկարար եղավ: Դիքմանը պատանու զանգը մարմնին միացրեց պարանոցն ու գլուխն անշարժացնող վիրաբուժական երկու պտուտակներով:

Հաղորդվում է, որ 18-ամյա Մարկոս Պառան արդեն փորձում է բասկետբոլ խաղալ:

# Հասարակական

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱԶԱԶՆՈՒՆՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (3)

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱԶԱԶՆՈՒՆՈՒ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

Հովհաննես Մաթեոսի Քաջազունին ծնվել է 1868թ. փետրվարի 1-ին (հին տոմարով), հոգեւորականի ընտանիքում:

1877-1886 Միջակարգ կրթություն է ստացել մասնավոր պանսիոնատում, հետո՝ հոգեւոր ճեմարանում:

1887-1893 Սանկտ-Պետերբուրգ. քաղաքացիական ինժեներների ինստիտուտ, ճարտարապետական ֆակուլտետ: Նրա նկարները 1891-ին ցուցադրվել են ինստիտուտի 25-ամյակին նվիրված ցուցահանդեսում: Ուսման տարիներին մեկնել է Անի հայ ճարտարապետությունը ուսումնասիրելու եւ նյութեր հավաքելու նախագծով հայկական եկեղեցու համար:

Ձբաղվել է գրականությամբ, պատմվածքներ է գրել եւ տպագրվել Պետերբուրգի մամուլում:

Ինստիտուտն ավարտել է գերազանց (առաջին կարգով):

1895 Քաբու: Աշխատել է իր մասնագիտությամբ (ընդմիջումներով մինչեւ 1906թ.) հաստիքից դուրս տեխնիկի պաշտոնում նահանգապետարանի շին. բաժնում: Բալխանների շրջանում կառուցել է հիվանդանոց եւ երկու բնակելի տուն՝ աշխատողների համար: Մշակել է ջրանցքի նախագիծ Բալխանների ջրերը դեպի Կասպից ծովն ինքնահոսով հեռացնելու համար:

1895-1897 Քաբու: Դաշնակցություն կուսակցության հանձնարարությամբ աշխատել է որպես Սեւծովյան բրիգադի սահմանապահ զորախմբի կորպուսի վարձու ինժեներ:

1897-1899 Թիֆլիս: Քաղաքային վարչությունում քաղամասի ճարտարապետ:

1899-1906 Քաբու: Նավթագործների համագումարի խորհրդում աշխատել է որպես ավագ ինժեներ: Հասարակական աշխատանք է ծավալել նավթագործների շրջաններում (Բալխանների, Բիբի-էրբաթի, Սաբունջինի):

1907 Քաբու: Սբ. Թադեոս ու սբ. Բարդուղիմեոս հայկական եկեղեցու շինարարության սկիզբը (ավարտվեց 1911): Միաժամանակ Թիֆլիսում: Մասնակցություն դաշնակցություն կուսակցության աշխատանքներին: 1908թ. կուսակցության հանձնարարությամբ մեկնում է Կոստանդնուպոլիս: 1909թ. բանտարկվում է եւ դատվում Սեմատի հատուկ ատյանի կողմից N102 հողվածով (տաժանավայր): Դատից խուսափելով մեկնում է արտասահման բարեկամ Միրիմյանի անձնագրով:

1911-1914 Քաղաքական վտարանդի (Փարիզ, Բելգիա, Թուրքիա): Վաճում կառուցում է հասարակական շենք, քաղաքական, հասարակական գործունեությանը զուգընթաց դասախոսություններ է կարդում Շեքսպիրի մասին: Ուսումնասիրում քրդական բանահյուսությունը, անում մի շարք թարգմանություններ («Մոսա ու Գյալո Շանհար սարի հետեւին», «Ազարների Բուխտանի դեմ», «Ասք Սաֆի

Բրախիմի, նրա մոր եւ կնոջ մասին», «Արաբի-ջանե», «Խաչալ» եւ այլն):

1914 Ռուսաստան: Ապրում է ոչ լեզալ: Քաղաքական գործունեություն:

1915 Թիֆլիս: Քաղաքնադատական կառույցների հանընդհանուր կայսերական ազատագրումից հետո զբաղվում է քաղաքական-հասարակական գործունեությամբ: Կովկասյան քաղաքների միության կազմում հանդիսանում էր Հայկական միության խորհրդի անդամ: Հավաքարի շրջանից ընտրված էր Թիֆլիսի քաղաքային դումայի իրավասու:

1917 Քաբու: Քաղաքական-հասարակական գործունեություն: Աշխատում էր նավթ-արդյունաբերական ֆիրմաների դեֆիցիտ ապրանքների բաշխողի պաշտոնում:

1918 Թիֆլիս: Քաղաքական գործունեություն: Առաջին կեսը Գեգեչկորի կաբինետում զբաղեցնում էր հասարակական խնամակալման մինիստրի պաշտոնը եւ Չխենկելի կաբինետում մինիստր էր առանց պորտֆելի:

1918-1920 Առաջին կեսը: Մայիսի 28, 1918-ի, Անդրկովկասյան ֆեդերացիան կազմալուծվելուց հետո ընտրվում է ՀՀ վարչապետ: Երկրորդ կեսը: Կառավարության ու պառլամենտի հանձնարարությամբ գլխավորում է «Հայաստանի տնտեսական օգնության միսիան» Փարիզում:

1920 Հոկտեմբեր, նոյեմբեր: Պառլամենտի նախագահ: Սովետական կարգերի հաստատումից հետո մնում է Երեւանում: Աշխատում է ճանապարհների վարչության (Ուշոդոր) նախագահի տեղակալ (1921): Բանտարկվում է: Ազատվելով, հեռանում է գործերից: Բուլշեիկների վերադարձից հետո Ձանգեզուրով գնում է Պարսկաստան:

1921-1924 Վտարանդիության տարիներ: (Բաղդադ, 1922-Բոմբեյ, Եգիպտոս, 1923-24 Վոստանդնուպոլիս, Բուխարեստ):

1925 Հայաստան: Ընտրվում է ՀՍՄ Պետականի կից Տեխնիկական խորհրդի անդամ: Աշխատում է բաժնի վարիչ Հայբանբակում (մինչեւ 1927թ.): Կառուցում է Երեւանում եւ Սարդարապատում բանբակամշակման գործարաններ, կից բնակելի ավաններ, Երեւանում ձեթ-օճառի գործարանը:

1926 Մասնակցում է Երեւանում ժողտան մրցույթին: Դասավանդում է պետհամալսարանի տեխնիկական ֆակուլտետում:

1927 ՀՍՄ Պետականի ԷԿՕՍՕ-ին կից Շին-տեխնիկական կոմիտեի նախագահի տեղակալ (մինչեւ 1931թ.):

1928թ. «Շինարարական կառույցների ռուս-հայերեն բառարանի» ստեղծումը Հր. Աճառյանի, Հ. Ջարդարյանի, Գ. Հակոբյանի, Ա. Տերյանի համահեղինակությամբ: Հրատարակեց հողված «Հայաստանում շինարարական աշխատանքների անցկացման խնայողականության մասին». Ե., «Տնտեսական լրաբեր», ՀՍՄ Հայաստանի Պետականի օրգան, 1928., N1:

1930 Փետրվարի 9. ՀՍՄ Լուսժողովմատի կոլեգիայի որոշմամբ շնորհվում է պրոֆեսորի կոչում: Այսպես կառուցեց շրջագործկոմի, հյուրանոցի շենքերը:

1932 ՀՍՄ Կոմունալ տնտեսության ժողկոմիսարիատի խորհրդի գիտ. քարտուղար:

1935 Կառուցեց Գյումրիի բնակելի տունը (Կիրովի փող.):

1936 Վերանախագծեց ու կառուցեց Բարձրագույն կունուինստական գյուղատնտեսական դպրոցի շենքը Տերյան փող. Երեւանում:

1937 Ենթարկվեց ռեպրեսիայի:

**ՆՈՎ. ՔԱՋԱՋՆՈՒՄԻ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ**

Հիվանդանոցի շենք, երկու բնակելի տուն, երկհարկանի մասնաշենք սպասարկող անձնակազմի համար Բալխանների շրջանում (Բաքու), 1899-1906թթ.:

Հայկական եկեղեցի Բաքվում, 1906-1911թթ. (չի պահպանվել):

Թեյարանի երկհարկանի շենք Թիֆլիսի Մայրանա թաղանասում: 1910\_ական թվականներին (չի պահպանվել):

Հասարակական շենք Վանում, 1911-1914թթ.:

Բանբակագտման գործարաններ Երեւանում, Արմավիրում, 1927-1929թթ. (չեն պահպանվել):

Ձեթ-օճառի գործարան Երեւանում, 1927-1929թթ.:

Բանվորական ավաններ ձեթ-օճառի եւ բանբակագտման գործարանների բանվորների համար Երեւանում, Արմավիրում, 1927-1929թթ.:

Բնակելի շինություններ եւ բանբակի հունքի պահեստներ «Հայբանբակ» միավորման բոլոր շրջաններում, 1927-1929թթ.:

Շրջխորհրդի շենք՝ հյուրանոցով եւ ճաշարանով Ապարանում, 1930թ.:

Բնակելի տուն խանութներով Գյումրիում, 1935թ.:

(Շար. 3)

ե. Ռուս եւ Անգլ. կայսրութիւնների հակամարտութիւնները: Նոյնպէս քաղաքատնտեսական գոյավիճակը:

գ. Ռուս- Օսմանեան պատերազմը 1877-78 թթ. «Հայկական հարցի» ծագումը եւրոպական դիւանդութիւն սեղանի վրայ: Սան Ստեֆանօ եւ Բեռլին վեհաժողովը:

Հայ ժողովրդի վիճակը, Ռուսաստան եւ Օսման երկրներում բալկանեան խնդիրների քննարկում:

է. Առաջին եւ երկրորդ համաշխարհային պատերազմների դրոպապատճառները եւ հետեւանքները:

ը. Ներկայ ժամանակի քաղտնտեսական գլոբալ վերլուծում: Հայ ժողովրդի պահանջները այդ լուսառնակի տակ:

եւ ի վերջոյ մեր երիտասառնութեան համար կը պարզվի թէ ինչ դաւերի լաբիրինթոս է անցել հայ տառապեալ ժողովուրդը:

Հաւանականօրէն չենք մեղադրի ուրիշներին: Եղել ենք զգայական ու կրքոտ մտածող: Զուրկ ենք եղել քաղաքական մտածումից, եւ ամենակարեւոր, չենք ունեցել հեռատես դիւազետ ղեկավարութիւն: Սնապարծութիւնն զերակայել է ողջախիտութեանը: Ինչպէս ասւած է.պատմութիւնն դաժանօրէն է պատժում իրեն արհամարողներին:

Հարգանք Վիկտոր Օհանջանեան  
Թեհրան 17 յուլիս 2001

**Ստացված գրություն**

Հարգելի «Նոյս»-ի խմբագրութիւն տպագրութեան խնդրանքով:

Սոյն առաջարկով ներկայացւում է պատմական նշանակալից դէպքեր, որոնք սկզբնաղբիւր կարող են լինել, հայ ողբերգութեան բացատրութեան համար:

Դրամատիքական հասարակարգի ստեղծման ընթացքում կարեւորագոյն գործոն են եղել Անգլիական եւ Ֆրանսիական «Ֆրամատնիզմը»:

Մեծ դեր է ունեցել նոր աշխարհակարգի գոյացման մէջ, իր լիբերալիստական նշանաբաններով:

Պարզ է արդիւնքը, մեծ պետութիւնները շահեցին աշխարհատարածքներ իր հարուստ ընդերքներով:

Իսկ թէ ի՞նչ հասաւ փոքր ժողովուրդներին, դրան կը պատասխանեն՝ երիտասառն ուսումնասիրողները...

Յաճախ ենք հանդիպում, հայ գրքերում պարբերական, կամ մամուլի մէջ իրատարակած նիւթերի, որոնք առընչւում են հայ ժողովրդի ողբերկական ճակատագրին: Լինում են եւ վերլուծական բացատրականներ, պատմական հատւածներից: Սակայն երբէք չի բացատրած պատճառականութիւնն եւ գործոնները, դժւար է տպարել իրական պատկերը, նիւթը դառնում է անբոխավարական դեմագոգիա:

Հերթական առումով ներքեւում ներկայացւում են կարեւոր իրադարձութիւններ՝ որոնք կը լինեն լուսաբանական նիւթ, ուսումնասիրական խմբակների համար:

ա. ճարտարարվեստական հեղափոխութիւնները Անգլիայում եւ Ամերիկայում:

բ. Մեծատիրական պետութիւնների ձեւաւորումն (Imperialism)

գ. Անգլ. եւ Ֆրանս. «Ֆրամատնիզմ» աներեւոյթ գործնութիւնն ու թափանցումները՝ ազատագրական շարժումների մէջ: (Ամերիկական եւ Ֆրանսիական հեղափոխութիւնների դրդիչ ուժը): Օսմանական եւ Իրանական կայսրութիւնների տապալումն եւ այլն:

դ. Կրիմեան պատերազմը, որում Անգլ. եւ Ֆրանսիան դաշնակցում էին Օսմաններին՝ ընդդէմ Ռուսաստանին 1854-6 թթ.

**ՍՓՅՈՒՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՎԵՐՑՆԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ**

Ի՞նչ է սփյուռքը, ի՞նչ է նշանակում սփյուռքագիտություն, անհրաժեշտ է ստեղծել սփյուռքի հիմնարկություն, ինչի՞վ է հայկական սփյուռքը տարբերվում մյուսներից, ի՞նչ ասելիք ունի արդի միջազգային դիասպորագիտությունը՝ այս եւ համանման այլ հարցերի շուրջ «Ազգի» թղթակցի հետ գրուցեցին Գիտությունների ազգային ակադեմիայի սփյուռքագիտության բաժնի նախկին ղեկավար, բանասիրական գիտությունների դոկտոր Կարլեն Դալլաքյանը, ԳԱԱ սփյուռքի բաժնի նախկին գիտաշխատող, նախկին փոխարտգործնախարար, ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, սփյուռքագետ Էդվարդ Մելքոնյանը եւ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, ազգագրագետ Լեւոն Աբրահամյանը: Ստորեւ ներկայացնում ենք նրանց կարծիքներն ու տեսակետները:

Կարլեն Դալլաքյան - Սփյուռքագիտությունը հայացքների մի ամբողջական համակարգ է, որը վերաբերում է Հայոց ցեղասպանությունից հետո արտասահմանում հայտնված հայկական զանգվածների էթնիկական ազգային նկարագրի պահպանմանը, նրանց գործունեությանն ու կենսագործունեությանը: Սփյուռքագիտության պատմությունը բոլոր այն գործերի եւ արարքների բարոյական ու գիտական քայլերի մասին է, որոնց նպատակը եղել է հատկապէս ազգային նկարագրի պահպանումը: Սա է հիմնական էությունը: Իբրեւ այդպիսին, այդ հայացքների ամբողջությունը երիտասարդ է այն իմաստով, որ առաջին անգամ մոտավորապէս 20 տարի առաջ ԳԱ ակադեմիայի համակարգում ստեղծվեց սփյուռքի բաժին: Ստեղծվեց Խ. Հայաստանի իշխանությունների նախաձեռնությամբ եւ ուներ անկախ հաստատության կարգավիճակ: Թվում էր, թէ հետագայում գիտական

բաժինն ավելի պիտի ընդլայնվեր ու վերածվեր ուսումնասիրությունների ինստիտուտի: Դժբախտաբար, դա տեղի չունեցավ: Վերջին 10 տարիների ընթացքում նյութական ֆինանսավորման պակասի հետեւանքով աստիճանաբար սահմանափակվեց բաժնի գործունեությունը եւ վերջիվերջո վերացավ: Մնացել է 3-4 հոգանոց մի փոքր խումբ, որը պատմության ինստիտուտի բաժիններին միացած շարունակում է գբաղվել սփյուռքին առնչվող որոշ թեմաների մշակմամբ: Այսպիսով, կազմակերպական առումով այդ գիտությունն ապրեց ուժգին վայրընթաց շարժում, որը տանում է դեպի վերջնական սպառում:

Գործնական եւ գիտական առումով բացարձակ ճիշտ չէ այս մոտեցումը, քանի որ սփյուռքը կամ սփյուռքի պատմությունն ունի շատ կարելու էջեր ու ծալքեր, որոնք անհրաժեշտ է անպատճառ վեր հանել: Դա ոչ միայն սփյուռքի բուն պատմությունն է, այլեւ հայ ժողովրդի պատմության շատ կարելու էջեր ու մասը: Այն խորագրին ուսումնասիրելու պարագայում պիտի կարողանանք նաեւ արդեն առկա էական որոշ միտումների մասին խոսել, մանավանդ որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունը փորձում է սփյուռքի հետ երկխոսության մտել: «Հայաստանսփյուռք» երկու համաժողովներն այդ փորձի մասին են վկայում: Այլ խնդիր է, թե ինչ ձեւով աշխատանքները կատարվեցին: Ես, իհարկե, իմ առարկություններն ունեմ, բայց երեւոյթն ինքը խրախուսիչ է, անչափ կարելու, որովհետեւ սփյուռքն այսօր մեզ խիստ անհրաժեշտ է մի շարք նկատառումներով: Ցավոք, Հայաստանի իշխանությունները նկատի ունեն միայն նյութաֆինանսական կողմը: Նախորդ իշխանությունների հայտարարած քաղաքականությունն էր՝ «դուք փող տվեք, իսկ մնացածը ձեր գործը չէ, թե ինչով կգբաղվեք»: Ներկա իշխանությունների գործնական քայլերում թեպետ չկա այդ խիստ գռեհիկ ձեւակերպումը, բայց արդյունքում նույնն է ստացվում: Մինչդեռ հարկավոր է սփյուռքի պոտենցիալ ուժի օգտագործման մասին մտածել: Որո՞նք են դրանք: Արդեն սասցի, որ սփյուռքը հայապահպանության բավականին դժվար ճանապարհ է անցել, որը պետք է լավ ուսումնասիրել: Ազգային իդեալի ոգին սփյուռքի մեջ ավելի ցայտուն է արտահայտված, քան Հայաստանում: Այդ ոգին մեզ է պետք ներարկել: Լեզվի, բարբերի մաքրության բազում խնդիրներ կան, որ նրանք կարող են մեզ օժանդակել եւ օժանդակում են:

Այս բոլորի կողքին իշխանությունները պետք է սփյուռքին իրավունք տան դատելու մեր ներքին ու արտաքին քաղաքականության շուրջ: Հայապահպանությունը Հայաստանում շուտով նույնքան վտանգված կլինի, որքան սփյուռքում, եթե արդեն իսկ վտանգված չէ: Այսօրվա աշխարհում հայերի առջեւ մի հիմնական հարց է կանգնած: Դա Հայաստանի պահպանությունն է իբրեւ հայ ժողովրդի վերջին հողակտոր, որովհետեւ եթե Հայաստանը կա, ուրեմն կա նաեւ սփյուռքի հայությունը, եթե չկա, ապա նրանք գոյություն ունեն միայն ֆիզիկապես: Կնշանակի հայության ընդհանուր պահպանության հարցում բոլորն են պատասխանատու: Իսկ ընդհանուր պահպանության հիմնախնդիրը Հայաստանի պահպանությունն է: Եթե այդպես է, ապա ի՞նչ իրավունքով ենք սփյուռքին զրկում իր կարծիքը հայտնելու, թե ինչպե՞ս պահպանենք Հայաստանը, ինչպե՞ս պատասխանատու դարձնենք բոլոր հայերին: Անշուշտ, սփյուռքը պետություն չունի եւ դժվար է պետություն չունեցողի հետ մտել հավասարը հավասարի դիմաց: Չկա սփյուռքը ղեկավարող համապատասխան մարմին, բայց Հայաստանը որպես մայր հող պիտի աշխատի գտնել այն մեխանիզմը, որով սփյուռքին մասնակից դարձնի ազգային

կարելու հարցերի քննարկմանն ու լուծմանը: Պետությունն ընդունել է քաղաքական կարելու ուղեգիծ միջազգային մակարդակով հետապնդում է ցեղասպանության ճանաչումը: Բայց սա արվել է միայն Հայաստանի իշխանության սահմաններում, մանատիպ հարցերի վերաբերյալ չունենալով նաեւ սփյուռքի կարծիքը:

Սփյուռքը շատ անելիքներ ունի Հայաստանի համար: Պետք է աչալրջորեն ուսումնասիրել սփյուռքի անցած ուղին, որպեսզի տեսանելի դառնա գալիքը, մանավանդ որ առաջիկա տարիներին շատ կարելու տեղաշարժեր են սպասվում սփյուռքի եւ Հայաստանի միջեւ: Եթե ամենայն ուշադրությամբ դիտարկենք, ապա ստեղծվում են երկու խոշոր հայակենտրոն երեւոյթներ՝ ամերիկակենտրոն եւ ռուսակենտրոն: Երկուսն էլ մեխանիկորեն եւ շատ արագ տեմպերով աճում են, ընդ որում, դա տեղի է ունենում Հայաստանի բնակչության հաշվին: Ուստի այս երեք կենտրոնների ապագա տեղաշարժերի առջեւ ենք կանգնելու: Սրանց միջեւ պայքար է սկսվելու այն պարզ պատճառով, որ այս երեք կենտրոնները չեն գտնվում միեւնույն երկրի իշխանության ներքո, այլ տարբեր իշխանությունների, որոնք նույնիսկ հակասություն ունեն իրար միջեւ: Մենք այսօր չենք կարող անտեսել սփյուռքը, որովհետեւ երկու հայկական կենտրոն է ստեղծվել եւ երկուսը միասին ավելի զորավոր են, քան հայաստանյան կենտրոնը, որը տարեցտարի մարելու միտում ունի: Միայն ՄԱԿի տվյալներով, ամեն տարի 50 հազար հայ է գնում Հայաստանից, սակ է թե՛ 40 տարի հետո այստեղ այլեւս հայ չի մնա: Ուրիշ խնդիր է, թե ինչո՞ւ է այս ամենը կատարվում եւ ովքե՞ր են սրա թիկունքում կանգնած: Ես անձնապես կարծում եմ, որ այս ամենի թիկունքում կանգնած է Թուրքիան եւ իրականացնում է ամերիկացիների ձեռքը: Հետեւապես, ինչպե՞ս կարելի է վերջ տալ սփյուռքագիտությանը:

Իշխանությունները պարտավոր են մտածել այն վերականգնելու մասին, ստեղծելու գիտական հաստատություն: Ունենալով այդպիսի հզոր կենտրոններ սփյուռքում եւ, մյուս կողմից, վերացնել գիտական ուսումնասիրության կենտրոնն այստեղ, ըստ իս, քաղաքական հիմնարկություն է: Իշխանությունները կլինե՞ն այն բարձրության վրա, որ իմաստուն ձեւով սփյուռքի ուսումնասիրությունները տանեն ճիշտ ճանապարհով՝ դա ցույց կտա իրենց վարքն ապագայում: Այնուամենայնիվ, մինչ այսօր այդ վարքը ոչ մի լավ բան չի խոստանում, որովհետեւ երկու անգամ սփյուռքի հետ երկխոսության մտելով չկարողացան ստեղծել ոչ սփյուռքի հետ գործակցության մշտական մարմին, ոչ էլ մտածեցին գիտական մարմինը թարմացնելու կամ վերականգնելու մասին: Այսինքն, մտում ենք գրույցի՝ առանց հիմքերը ստեղծելու: Դրա համար էլ շատ մեծ հավատ չունեն:

Էդվարդ Մելքոնյան- Ուղղակի պարադոքսալ երեւոյթ է, որ հայագիտության բաղկացուցիչ մաս կազմող սփյուռքագիտությունը սկսեց զարգանալ խորհրդային տարիներին եւ դադարեց գոյություն ունենալ անկախ Հայաստանում: Մինչդեռ Հայաստանսփյուռք հարաբերությունները նորովի դրսևորվեցին վերջին տարիներին, երբ Հայաստանն ավելի քան երբեք՝ զգաց սփյուռքի օժանդակության կարիքը:

«Հայաստանսփյուռք» երկու համաժողովներում էլ խոսվեց սփյուռքի հատուկ հիմնարկություն ստեղծելու անհրաժեշտության մասին: Եթե իշխանություններն իսկապես որոշեն հայրենասիրական ժեստ անել, ապա նախ պետք է պարզեն, թե ժամանակակից աշխարհում ի՞նչ է նշանակում սփյուռքագիտություն, ի՞նչ նպատակներ է հետապնդում: Միջազգային ընդունված տերմինով դիասպորագիտությունը վերջին տարիներին շատ

արագ է զարգանում աշխարհում, հատկապես արեւմուտքի երկրներում: Դիասպորա տերմինը հունարեն-սիռուս, տարածում, սփյուռք հասկացության հոմանիշն է, որը սկզբնապես կիրառվել է Պաղեստինից արտաքսված հրեաների նկատմամբ: Դիասպորան բռնագաղթած ազգային փոքրամասնությունների յուրահատուկ տեսակ է: Մինչև 3այոց ցեղասպանությունը սփյուռք հասկացությունը հայերենում երբեք չի գործածվել: 3այկական գաղթօջախներում ապրող հայերն, ըստ էության, բռնագաղթած չէին, նրանք ցանկացած ժամանակ կարող էին վերադառնալ հայրենիք: Իսկ Ցեղասպանությունից հետո հայերը բռնագաղթեցին Արեւմտյան 3այաստանից՝ մեկընդմիջտ գրկվելով այնտեղ ապրելու իրավունքից:

Ձրկված լինելով պետությունից, սփյուռքը ձգտում է հայության առջև ծառայած խնդիրները լուծված տեսնել 3այաստանի հետ: Այդ նպատակի իրագործման համար, ինքնաբերաբար, առաջ է գալիս մեկ միասնական համակարգող մարմին ստեղծելու անհրաժեշտությունը: Կարծում են, որ ժամանակն է հրաժարվելու սոսկ կարկատաններ անելու գործելակերպից եւ մշակելու զարգացման տարաբնույթ ծրագրեր՝ ընդգրկելով լավագույն մասնագետներին: Ցավալի փաստ է, որ անցած տարիների ընթացքում գրեթե լիովին անտեսվել է սփյուռքի մտավոր ներուժը: Մինչդեռ Մ. Նահանգներում, Ֆրանսիայում, Ռուսաստանում կան մեծ թվով հեղինակավոր մասնագետներ ու գիտնականներ: Նրանց գիտելիքների ու փորձի շնորհիվ հնարավոր է համադրել տարբեր երկրների փորձը եւ մշակել զարգացման իրատեսական, կենսունակ ծրագրեր: Աշխարհում հայանպաստ քարոզչություն տարածելու եւ համահայկական տեղեկատվական բանկ հիմնելու կարեւորության մասին գիտակցում են բոլորը, սակայն առ այսօր չկա գործող մեխանիզմ: Սա եւս փաստում է, որ հասունացել է ժամանակը գործնական քայլեր կիրարկելու եւ այլեւս անընդունելի է քննարկումներով գոհանալը: Սփյուռքի հաստատության կարեւոր խնդիրներից մեկը պետք է լինի տարբեր լեզուներով ամսաթերթերի եւ ամսագրերի հրատարակումը, ինչպես նաեւ սփյուռքահայ պարբերականների տարածումը 3այաստանում, ինչը մեծապես կնպաստի հայության երկու հատվածների փոխմանաչմանը: 3այաստանի իշխանություններն ակնկալում են հնարավորինս մեծ ներդրումներ՝ միաժամանակ զլանալով ապահովել համագործակցության կայուն եւ արդյունավետ ընթացքը: Թեպետ այդ գործում այսօր ներգրավված են եւ պետական, եւ հասարակական կազմակերպություններ, սակայն նրանցից եւ ոչ մեկը պատասխանատու չէ սփյուռքի հետ համատեղ գործունեության ծրագրեր մշակելու եւ իրականացնելու համար: Կարծում են, որ այս հարցը մեծ լրջություն է պահանջում, քանի որ հստակ ծրագիր չունենալու դեպքում անխուսափելի է նման հիմնարկության անարդյունավետ գործունեությունը:

Լեւոն Աբրահամյան՝ ժամանակակից դիասպորագիտության մեջ սփյուռքը դիտարկվում է նոր տեսանկյուններից: Պոստմոդեռնիստական ուղղություններում արդեն տարածված մոտեցում է սփյուռքի գոյացման պատճառ համարել ոչ միայն հայրենիքից տվյալ ժողովրդի բռնագաղթումը, այլեւ քաղաքական իրավիճակների հետեւանքով սահմանների փոփոխությունները: Դա անվանվում է պատահարային դիասպորա: Այս ոչ ճիշտ մոտեցմամբ Արցախի հայերը իբր դառնում են սփյուռք, նրանք տեղաշարժ չապրեցին, հայրենիքը չփոխվեց, այլ ազգային-ազատագրական շարժման շնորհիվ ձեռք բերեցին անկախություն: Դիասպորագիտության մեջ հայկական սփյուռքը համարվում է դասական

իրեականից հետո: Սփյուռք եւ գաղթօջախ հասկացությունների տարբերությունները նույնպես վերցված են իրեական մոդելից: Գաղթավայր բառն առաջացել է երբայերեն գալուտ բառից գաղութ: Իսրայելի պետության ստեղծումից հետո 1947 թ. իրեական դիասպորայի մոդելը նմանվում է հայկականին պատմական հայրենիք եւ դիասպորա: Քաղաքական հարցերում դիասպորագիտությունն այսօր կարող է որոշիչ դեր խաղալ: Այսպես, օրինակ, աղբյուրներից քաղաքագետներն ու պատմաբանները դարաբաղցիներին եկվորներ են համարում ելնելով քաղաքական խնդիրներից: Թեպետ Իսրայելը թուրքմեն քաղաքականություն է վարում, սակայն Ատոմ Էգոյանի «Արարատ» ֆիլմի հովանավորը կանադացի իրեա է: Դա նշանակում է, որ իրեաների հայրենիքն ու սփյուռքը միանգամայն տարբեր մոտեցումներ ունեն միեւնույն քաղաքական խնդրի նկատմամբ: Դիասպորայի հայկական եւ իրեական հիմնական տարբերությունն այն է, որ հայերը գաղթելով մեկ այլ երկիր՝ մնում են Ամենայն հայոց կաթողիկոսի հովանու տակ, իսկ իրեաները ստեղծում են ինքնուրույն կառույց՝ իրենց հետ տանելով հոգեւոր առաջնորդին:

3այկական սփյուռքի բնորոշ գծերից է եղեռնի հիշատակը: Այսօր կան երիտասարդ սփյուռքահայեր, որոնք 3այաստանի մասին գրեթե ոչինչ չգիտեն, սակայն Ցեղասպանության հիշատակով են իրենց հայ գզում: Երբեմն նկատվում է հակառակ երեւույթը: Որոշ երիտասարդներ ծուլվում են այլ ազգերին՝ գոհի պիտակը չկրելու համար: Դիասպորագիտության վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 3այաստանից հեռացած հայերը փոքրևինչ հակադրության մեջ են սփյուռքահայերի հետ: 3այաստանցին թեւ լթում է 3այաստանը, սակայն նրա համար այն մնում է որպես իրական հայրենիք: Իսկ սփյուռքահայի համար 3այաստանը մտացածին հայրենիք է, իրականը Արեւմտյան 3այաստանն է: Այստեղից էլ գալիս է այն զարմանալի հոգեբանական պահը, որ սփյուռքահայը 3այաստանում եկեղեցի կամ ճանապարհ է կառուցում, իսկ հայաստանցին մի փոքրիկ գումարով օգնում իր հարազատին կամ ընկերոջը: Վերջինը մագանոթային սնուցում է, որն, անշուշտ, չի նկատվում: Կան ուսումնասիրողներ, որոնք սփյուռքահայերին եւ հայաստանցիներին տարբեր ժողովուրդներ են համարում՝ անտեսելով այն գործոնը, որ տվյալ երկիրն է կնիքն է դնում այնտեղ ապրող հայերի վրա: 3այերի բաժանումը երկու հատվածների դարերի պատմություն ունի: 387 թ. ի վեր այն խորը հետք է թողել հայ ժողովրդի կենսակերպի ու հոգեբանության վրա: Անվանի հայագետ Նիկողայոս Ադոնցը հայ ժողովրդի բաժանումը բացատրում է երկու միտումներով՝ խոհեմ եւ ըմբոստ, որը բնորոշ է եղել Մամիկոնյան եւ Բագրատունյաց տներին: Սակայն այդ միտումները կայուն չեն եղել եւ պատմության ընթացքում երբեմն դրսևորվել են հակառակ ձևով, այսինքն՝ Մամիկոնյաններին հատուկ է եղել ըմբոստությունը, Բագրատունիներին՝ խոհեմությունը: Այս հակադրությունը երեւի թե կարելի է տարածել հայրենիքահայերի հատվածների վրա:

3այագիտության այս ճյուղը կարող է ուսումնասիրության, քանզի մեր ժողովրդի երկու հատվածների պատմական անցյալի քառուղիները դեռևս չեն խաչաձեւվել:

*Պատրաստեց ՌՈՒՀԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ (ԱԶԳ)*

# Մշակույթ

## Համառոտ ակնարկ իրանահայ գաղթաբախների պատմության

Էդ. Բաղդասարյան  
(Էդ. Գերմանիկ)

(6)

(Շար. Նախորդ համարից)

ԱԲԱԴԱՆ քաղաքի հայ համայնքը սկզբնավորվել է 1909-ին, երբ Անգլոիրանական նավթային ընկերություններում ծառայության են անցել Չարմահալում, Նոր Ջուղայում, Թեհրանում եւ Թավրիզում բնակվող մի խումբ հայեր: Առաջին համաշխարհային պատերազմի (1914-18) ընթացքում նրանց են միացել Արեւմտյան Հայաստանից, մասնավորապես Վանից գաղթածները: Հայերի թիվն աճել է նաեւ հետագայում 1923-ին կազմելով 400, 1923ին 610, 1938-ին 2 հզ., 1969-ին 5 հզ: Հետագա տարիներին նրանք թիվը նվազել է: Հիմնականում զբաղված են նավթարդյունաբերության, ինչպես նաեւ առեւտրի մեջ: Համայնքն ունի եկեղեցի, վարժարան, մարզական ակումբ, «Գուսան» երգչախումբը: Դպրոցը («Աղաբ») հիմնվել է 1949 թ.: Աբադանում լույս է տեսել 3 անուն մեքենագիր մամուլ:

ԹԱՎՐԻԶՈՒՄ հայերի հաստատվելու տարեթիվ մասին ստույգ տեղեկություններ չկան: Հայտնի օ, սակայն, որ XII դ. խելջուկ նվաճողները հազարավոր հայեր են գրավարել ու բնակեցրել Ի-ում, այդ թվում նաեւ Թավրիզում: Երրորդից ճանապարհորդներ Մարկո Պոլոն (1271), Գոնգալեսը (1403), Կանտարինին (1476) վկայում են, որ XIII-XV դդ. այստեղ եղել է մեծաթիվ եւ բարգավաճ հայ համայնք: 1334-ին Թավրիզում գրված հայկական մի ձեռագրի հիշատակարանում հիշվում է 2 եկեղեցի՝ Ս. Սարգիս եւ Ս. Աստվածածին, իսկ 1345-ի հայկական մեկ այլ ձեռագրի հիշատակագիր Թավրիզը համարում է ոչ միայն պարսիկների, այլեւ հայերի մայրաքաղաք: Թավրիզահայերի թիվը նվազել կամ աճել է երկրում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների (թուրք-պարսկական պատերազմներ, շահ Աբբաս Ա-ի բռնագաղթ, միջՖեռոպիական արյունահեղ կռիվների եւ այլն) համեմատ: 1830-ին Թավրիզում եղել է ընդամենը 40 տուն հայ (Թավրիզահայերից շատերը 1829-30-ին գաղթել են Արեւելյան Հայաստան):

XIX դ. 2-րդ կեսին Ի-ի կառավարությունը, էլնելով երկրի տնտեսական եւ քաղաքական շահերից, որոշ արտոնություններ է շնորհել իրանահայ հայմայրքներին. թավրիզահայ համայնքը եւս ստվարացել է: XIX դ. ծերջին եւ XX դ. սկզբին քաղաքի հայ բնակչության թիվը հասել է մոտ 5500-ի: 1946-ին զգալի թվով թավրիզահայեր հայրենաժողովել են Խորհրդ. Հայաստան: 1977-ին Թավրիզում բնակվել է շուրջ 6 հզ. հայ: Ներկայումս էլ (1999) հայերի թիվը գրեթե 2 հզ. է:

Թավրիզը Ատրպատականի հայոց թեմի կենտրոնն է: Տեղի առաջին հայկական դպրոցները գործել են եկեղեցուն կից (հիշատակություն կա 1670-ից): 1835-ին բաղվել է Ներսիսյան (1875-ից Արամյան) դպրոցը, 1875-ին Հայկազյանը, 1879-ին երկու իգական դպրոցներ, որոնք կոչվել են Աննայան (1886-ից): Դպրոցները գործում են ցայսօր՝ Հայկազյան (1882)- Թամարյան (1895)- Ս. Սահակյան ընդհանուր անվամբ: 1909-36-ին գործել է Թեմական-

կենտրոնականը: Կան նաեւ Կաթողիկե եւ Ավետարանական հայկական դպրոցները: Քաղաքում առաջին հայկական տպարանը հիմնավորվել է 1889-ին, հայերեն առաջին թերթը («Գործ») լույս է տեսել 1903-ին (առ այս օր լույս է տեսել 16 անուն տպագիր եւ 24 անուն ձեռագիր եւ մեքենագիր պարբերական):

Թավրիզում ազգային-մշակութային կյանքը կազմակերպել են ղեկավարել են Թավրիզի լսարանական ընկերություն (1898), Ատրպատականի հայուհյաց բարեգործական միացյալ ընկերությունը (1901), Կուլտուրական միությունը (1916), ՀՕՍ-ը (1926) եւն: Առաջին հայ թատերական ներկայացումը այստեղ տրվել է 1879-ին: Թավրիզեցի էր պատմիչ Առաքել Դավրիժեցին:

ՆՈՐ ՋՈՒԴԱ հայկական գաղթավայրը հիմնադրել են Աբբաս Ա շահի կազմակերպած բռնագաղթի հետեւանքով Ի-ի Սպահանի նահանգ քված Ջուղայի հայերը, XVII դ. խկզբին, Ջայանդերուղ գետի ափին Սպահան քաղաքի մոտ: Նպատակ ունենալով հայ վաճառականների միջոցով ընդլայնել Ի-ի առեւտրական եւ քաղաքական կապերը օտարերկրյա պետությունների հետ Աբբաս Ա շահը Ն.Ջ.-ին շնորհել է արտոնություններ («Արքունի խաստերին») վերապահվող իրավունքներ): Ունեցել է ինքնավարություն, որն իրականացրել է քալանթարը (քաղաքագլուխ), դատական գործերը վարել է քեդխուդան (քալանթարի տեղակալը): Կարճ ժամանակում Ն.Ջ. բարգավաճել է, արդեն 1620-ական թթ. ընկեցել է ավելի քան 30 հզ. բնակիչ, դարձել երկրի առեւտրական կապիտալի կենտրոն: Նոր Ջուղայեցի հայ վաճառականները հանդես են եկել որպես Արեւելքի եւ Արեւմուտքի միջուկ միջազգային առեւտրա միջոցորդներ: 1617-ին Աբբաս Ա շեղյալ է համարել Անգլիայի հետ կնքված առեւտրական պայմանագիրը, անբողջությամբ Ն. Ջ.-ի հայ վաճառականներին հանձնել իրանական հում մետաքսի արտահանման մեծաշնորհը: XVII դ. կեսին Ն.Ջ.-ի հայ վաճառականները ստեղծել են «Նոր Ջուղայի հայ առեւտրական ընկերությունը»: Տնտեսական գործունեությանը զուգընթաց, նրանք հաճախ կատարել են նաեւ դիվանագիտական հանձնարարություններ:

Գաղութահայ հասարակությունը չի եղել միատարր, զգալի թիվ են կազմել միջին եւ չավոր խավերը, որոնք հիմնականում զբաղվել են արհեստագործությամբ (նշանավոր են եղել ոսկերիչները, գորգագործները, կարպասագործները, ներկարարները եւն): Ն.Ջ.-ի հայ արհեստավորների սոցիալական բոլորքի դրսևորումները էր 1630-40-ական թթ. դերձակ Թումիկի եւ Սեւ Պետրոսի գլխավորությամբ ծագած աղանդավորական շարժումը: 1670-80-ական թթ. գաղութն աստիճանաբար անկում է ապրել՝ Ի-ի տնտեսական ճգնաժամի, ուժեղացած ազգային, կրոնական հալածանքների պատճառով: 1722-ի աՖղանների արշավանքի ժամանակ Ն.Ջ. ավերվել է, հայերը գաղթեցին Յուզբախ, Ֆրանսիա, Ավստրիա, Հոլանդիա, Ռուսաստան եւ այլուր:

XVII-XVIII դդ. Ն.Ջ. եղել է հայկական մշակույթի կարելոր կենտրոն: 1630-ական թթ. Խաչատուր Կեսարացին հիմնել է դպրոց (դասավանդվել է երաժշտություն, պոեզիական, քերականություն, փիլիսոփայություն, բնական գիտություններ եւն), որը ժամանակակիցները կոչել են «համալսարան»: 1636-ին հիմնադրվել է տպարան (Իրանում առաջինը): Նշանակալի դեր է խաղացել նաեւ Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցը, որտեղ աշակերտներին սովորեցրել են երկրպակալ լեզուներ եւ «վաճառականության արվեստ»: Վանքին կից բացվել է մատենադարան, որտեղ հավաքվել են բազմաթիվ հայերեն ձեռագրեր: Մեծ զարգացման է հասել որմնակարչությունը,

գեղանկարչությունը, մանրանկարչությունը, ճարտարապետությունը, աշուղական պոեզիան:

Ն.Ջ. եղել է իրանաբնակ (բացառությամբ Ատրապատականի), իսկ հետագայում նաեւ հնդկաստանաբնակ հայերի կրոնական կենտրոնը: XIX-XX դդ. մնացել է որպէս թեմական եւ մշակութային կենտրոն: XIX դ. 30-ական թթ. Ն.Ջ.-ում բնակվել է շուրջ 4 հզ. հայ: 1858-ին հիմնվել է Օրիորդաց դպրոցը, 1880-ին մի շարք դպրոցներ միավորվել եւ կազմել են «Ազգային կենտրոնական դպրոցը»: Ն.Ջ. դպրոցները՝ Ս. Ստեփանոս եկեղեցուն կից դպրոց (1833), Կատարիյան (օրիորդաց, 1854, առաջինը Իրանում), Գեւորգ Քանանյան իգական դպրոց ու մանկապարտեզ (1901-05):

Սամուլ Ընկեր (1920), Ն.Ջ. Աւետաբեր (1906-11), Ն.Ջ. Լրաբեր (1904-8), եւ 10 անում ձեռագիր եւ մեքենագիր մասով:

1905-11-ի իրանական հեղափոխությունից հետո աշխուժացել է Ն.Ջ.-ի մշակութային կյանքը: 1904-8-ին իրատարակվել է «Նոր Ջուղայի Լրաբեր» ամսաթերթը: Կառուցվել է թանգարան-մատենադարանի շենքը (1905): 1930-ական թթ. ստեղծվել են ազգային ակումբներ, կազմակերպվել երգչախմբեր: 1946-ին սկսվել է Ն.Ջ.-ի հայերի ներգաղթը Խորհրդային Միաստան: 1952-ին Ն.Ջ.-ում բնակվել է 4 հզ. 675, 1958-ին՝ 5 հզ., 1969-ին՝ 8 հզ., 1979-ին՝ 10 հզ. հայ: Ներկայումս (1999) Նոր Ջուղան Սպահանի թաղամասերից է: Տեղի հայության թիվը շուրջ 8 հզ. է, որը գնալով նուստանում է: Հիմնականում զբաղվում են արհեստներով, տնայնագործությամբ, զգալի թիվ են կազմում մանր ձեռնարկատերերն ու առևտրականները: Հայմանքի ազգային-մշակութային կյանքում կարեւոր դեր են խաղում մտավորականները:

(Շար. 6)

## Փետրվարի հայկական տոները

Էդ. Գերմանիկ

### Սուրբ Սարգիս տոնը

Այս տոնը հայոց եկեղեցու ամենահարգված տոներից մեկն է:

Սուրբ Սարգիս տոնը, ինչպես եւ Սուրբ Սարգսի պաշտամունքը, մեծ ժողովրդականություն ունի հայոց մեջ, հատկապես երիտասարդների շրջանում, եւ մասնակիորեն պահպանվել է մինչեւ մեր օրերը, նշելու հաստատուն օր չունի:

Անուղղակիորեն կապվելով 35-օրյա շարժականություն ունեցող Ջատիկի հետ,

Սուրբ Սարգսի տոնը նույնպես շարժվում էր 35 օրերի ընթացքում, նշվելով հունվարի 18-ից մինչեւ փետրվարի 23-ը ընկնող այն շաբաթ օրը, որը տվյալ տարվա Ջատիկի տոնից առաջ էր ուղիղ 63 օր:

Ինչպես եւ անունից երևում է, այն նվիրված է շատ սիրված սուրբ Սարգսին, որի անվան եւ պաշտամունքի շուրջ հայոց մեջ բազմաթիվ ավանդություններ են պահպանվել: Հիշենք դրանցից մեկը.

«Հռոմեացիների Հուլիանոս կայսրը կռվում էր հայերի դեմ: Նրա դեմ դուրս եկավ սուրբ Սարգիսը: Յոթ օր ու գիշեր, առանց ուտելու ու խմելու կռվում էր քաջ Սարգիսը: Կռվից հետո քաղցն այնքան է ուժեղանում, որ նա նստում է մտածելու, թե որտեղից մի կտոր հաց ձեռք բերի: Այդ մտածմունքի ժամանակ հանկարծ քամի է բարձրանում եւ երկնքից նրա մոտ իջեցնում մի քանի ցորենի հասկ: Սարգիսը հավաքում է այդ հասկերը, տրորում ափերով եւ ուտում

հատիկները: Քաղցը հազեցնելուց հետո, սուրբը դիմում է երկնքին, որ նա կատարի այն մարդու իղձը, ով տարվա մեջ յոթ օր պաս կպահի, իսկ ուրբաթ գիշերը փոխինձ կուտի »:

Ժողովրդի պատկերացմամբ Սուրբ Սարգիսը զորավարի տեսքով մի սուրբ է: Նա իր սպիտակաբաշ ձին հեծած, սլանում է անպերով, օգնում է նեղության մեջ գտնվողներին, ազատում վտանգի ենթարկված ճանապարհորդներին, սատար կանգնում երիտասարդներին, իրականացնում նրանց մուրազները:

Այս տոնը հարգելով՝ հայ ժողովուրդը կառուցել է բազմաթիվ եկեղեցիներ Սուրբ Սարգիս անվամբ, օրինակ Երեւանում, Թեհրանում, եւ այլուր:

Տոնի նախօրյակին ուրբաթ երեկոյան տարեց կանայք, իրենց տան գլխավոր դռների մոտ, դնում են մի-մի սկուտեղ, վրան լցված փոխինձ, իսկ չորս կողմը մոմեր են վառում, որպես ըստ ավանդության, Սուրբ Սարգիսը իր ձիով անցնելու ժամանակ, այցելի նաեւ իրենց տուն եւ որպես հաջողության նշան, փոխինձի վրա թողնի իր հրեղեն ձիու պայտի հետքերը:

Առավոտյան փոխինձը գննելուց եւ նրա վրա եղած նկարներից գուշակություններ անելուց հետո, այդ նույն փոխինձը օգտագործում են: Դեռատի աղջիկներն ու երիտասարդ տղաներն ամբողջ օրը քաղցած եւ ծարավ են մնում: Նույն երեկոյան նրանք աղի բաղադր են ուտում, ապա մի քանի աղոթք շնջալով, քնում են: Նրանք անհամբերությամբ սպասում են, թե ի՞նչ երազ են տեսնելու եւ ո՞վ է իրենց ջուր տալու: Ըստ հավատանքի՝ այդ նույն ամօն էլ իրենց մուրազն է, որի հետ պետք է ամուսնանան:

## ՏԵՄԻՆԵԼԴԱՌԱՋ ՏՈՆԸ

Տեառնընդառաջը եկեղեցական անշարժ տոներից է, նշում են փետրվարի 13-14- ին:

Տոնի կրոնական բացատրությունը կապված է 40 օրական մանուկ Քրիստոսի Աստծուն նվիրաբերելու արարողության հետ: Հովսեփն ու Մարիամը մտնում են տաճար, նրանց ընդառաջ է գալիս Սիմեոնը, որն ուխտել էր այք չփակել, արթուն մնալ, մինչեւ որ չտեսնի Օծյալ Փրկիչին: Նա մեծ ուրախությամբ օրհնում է մանուկ Քրիստոսին եւ փառաբանում Աստծուն, որ ինքն արժանացավ եւ ականատես եղավ այդ մեծ իրադարձությանը:

Պետք է նշել, որ Տեառնընդառաջ տոնի արմատները հասնում են մինչեւ հայ ժողովրդի պատմական անցյալը,

կապվում են հեթանոսական շրջանի՝ հուր-կրակի, արեւապաշտության հետ: Հազարամյակների խորքից ազգային այս տոնը նույնպես քրիստոնեական բովանդակություն է ստացել եւ մոռացության է մատնվել հեթանոսական արարումը:

Այս տոնի կապակցությամբ հայոց եկեղեցիներում պատարագ է մատուցվում: Ապա եկեղեցու բակում կատարվում է կրոնական արարողություն քահանայից դասի ձեռամբ եւ ժողովրդի մասնակցությամբ: Այդ արարողությունից հետո, եկեղեցու բակում մեծ խարույկ են վառում եւ նորապսակներն ու երիտասարդները թռչում են կրակի վրայով:

Տեառնընդառաջ տոնը Հայաստանի տարբեր շրջաններում ինչպես նաեւ ավանդապահ Սփյուռքում այլ անվանումներ էլ ունի՝ «Տերնընտաս», «Տրրընդեգ», «Տերընդեգ», «Տոռնը-տոռնը», «Տենդառաջ» եւ այլն:

Այդ օրերին, բոլոր տներում պատրաստում են աղանձ, բովում են ցորեն, կորեկ, սիսեռ, ոսպ, հետը խառնում են չամիչ: Ժամերգության զանգակները խիելուց հետո, բոլորը մի-մի մոմ վառած

վերադառնում են իրենց տները, աշխատում են մտներ վառ պահել:

Բակերում արդեն դիզված են լինում խոտերի կույտերը: Դրանք վառում են եկեղեցուց բերած մոմերով,

որից հետո սկսվում են համաժողովրդական խրախմանքները,

ծիծաղն ու կատակը, երգն ու պարը թեւածում են շրջապատում, ուրախությունը մուտք է գործում ամենուրեք, իսկ տանը սպասում են առատ ուտեստեղեններով ծանրաբեռնված տոնական սեղանները:

Այս տոնին կատարվող պարերգներից կարելի է հիշատակել Լալուխան,

Մաքրուհի, Թամզարա, Յանաներ եւ այլն: Խաղերից էին Լախտախաղեր, Գնդակախաղեր, Թուղլանգի, Տասսից:

Այսպիսով, Տերընդեզի տոնը խորհրդանշում է արտերի բերրության, հունձի առատության, երջանիկ կյանքի օրհնության ակնկալիքներ, ինչպես նաև ընտանեկան միության ու համերաշխության բարի մաղթանքներ:

## Աշխարհում ինչի՞ համար են սիրում հայերին

Ս. ԻՍԿԱՆԿ-ԱՐՅԱՆ, Գ. ՎԱՏԱՆՅԱՆ

26. Արդյոք կա՞ այլ երկիր, որտեղ այդքան արյուն է հեղեվել: Արդյոք կա՞ այլ ժողովուրդ, որ հյուսել է այդքան երգեր բարեկամության եւ սիրո մասին:

Եվ այդ ամբողջ երկիր մեջ, թշնամու վրա ոստուկնի պատրաստ հզոր, սեւ առյուծի պես սապատածեւ, բարձրանում է Արարատը: Ամբողջ ժողովրդին, ամբողջ երկրին երեւում է հին բիբլիական Արարատը, սրբազան Մասիսը՝ փոքր-ինչ ծածկված ձյունով եւ ամպերով:

**ՍԵՐԳԵՅ ԲՈՐՈՂԻՆ /1902-1974/  
Ռուս գրող**

*“Գրքերի աշխարհ”, 1989, թիվ 10, էջ 8/*

27. Որպես լեզվաբան ես փորձել եմ թափանցել հայոց լեզվի գաղտնարաններ, նրա հոգու մեջ, պարզել, թե ինչպիսի մասնավոր շնորհք ունի այդ լեզուն, որ կարողանում է այդքան գերազանցապես արտահայտել միանգամայն գիտական, փիլիսոփայական ամենաճշգրիտ գաղափարները, ինչպես նաեւ արտահայտելու բանաստեղծական երազները, ամենանրբին զգացմունքները: Հայոց լեզվի մեջ ես գտա այդ բոլոր գեղեցկությունները, սիրահարվեցի այդ լեզվին եւ իմ կյանքի ամեն մի վայրկյանը նվիրեցի այդ լեզվի ուսումնասիրությանը:

**ՖՐԵՂԵՐԻԿ ՖԵՅԴԻ / ծնվել է 1908/  
Ֆրանսիացի հայագետ**

*“Իսահակյան -100, Հորեյլանական տարեգրություն,  
Երեւան, 1978, էջ 196/*

28. Խանասորին արշավանքը նոր-նոր էր նախապատրաստվում: Նույնիսկ դեռ չէր էլ նախապատրաստվում, այլ միայն մտահղացված էր Թիֆլիսում: Շարժման առաջնորդները վճռեցին ցույց տալ Թուրքիային եւ քրդերին, որ հայերին անհնար է ոչխարների պես մորթել, որ Սուրբ Բարդուղիմեոսի վանքի սպանդին նրանք կառող են անել պատասխան տալ: Չինվորները հավաքվեցին Սալմաստում: Այստեղ էին Ահներեսը, Արամայիսը, Կարոն, երգիչ Սաքոն, այստեղ հասարակ զինվորներ էին Վազգենը, ում անունը թնդում էր ամենուր, Իրանի հեղափոխականների առաջնորդ Եփրեմը, Սասունի

հերոս Անդրանիկը, որի Սասունի ապստամբության ժամանակ քրդերի ու թուրքերի դեմ նղած ճակատամարտերի մասին երգերը երգվում էին ամբողջ Կովկասում, Փոքր Ասիայում, Քուրդիստանում ու Պարսկաստանում, եւ որը հիմա հայկական գործող խմբի գլուխ է կանգնած: Այստեղ հասարակ զինվոր էր ոչ պակաս հայտնի Նիկոլ Դումանը: Բոլորը համբավվոր անուններ, մարդիկ, ում կյանքը համակ լեզենդ էր, որոնց սխրանքները փառաբանում էին ժողովրդական երգիչները, որոնցից ամեն մեկի կենսագրությունը կարող էր մթազնել Սայն Ռիդի ու Կուպերի մտահնար պատմությունները:

Նրանցից քչերը ապրեցին մինչեւ մեր օրերը: Չինվորները երկար չեն ապրում. նրանց մի մասը զոհ գնաց գնդակին, դաշույնին կամ մեռավ թուրքական բանտում: Միայն Նիկոլ Դումանը, ում անունը դնում են Անդրանիկի ու Եփրեմի անունների կողքին, ինքը վերջ տվեց իր կյանքին: Նիկոլը ծանր հիվանդ էր թոքախտով, երբ սկսվեց պատերազմը, երբ Ռուսաստանում սկսեցին կազմավորվել հայկական խմբերը: Ամբողջ կյանքում այդ խմբերում պայքարած, ամբողջ կյանքում թուրքական լծից Հայաստանի ազատագրումը երազած Նիկոլը չէր կարողանում անկողնում լինել, երբ հասել էին վճռական պայքարի օրերը: “Ես չեմ կարող անօգտակար, թուլացած պառկել անկողնում, երբ սկսվել է վերջին գոտեմարտը”, - ասում էր նա ընկերներին, բայց եւ անկողնուց ելնել ի վիճակի չէր ու, ի վերջո, ինքնասպան եղավ: Դա այն երկաթյա բնավորություններից էր, որոնց ծնունդ է ժողովրդի ազատագրական պայքարի դարաշրջանները, ում ամբողջ կյանքը պայքար է, ում համար վատթարագույն պատիժը պայքարից անմասն մնալն էր: Յուրաքանչյուր երկիր, յուրաքանչյուր ժողովուրդ որոշակի ժամանակաշրջաններում ծնունդ է այդպիսի հերոսներ: Հայաստանը, որ տասնամյակներ շարունակ զինված պայքար էր մղում թուրքերի եւ քրդերի դեմ, մի ամբողջ շարք նման հերոսներ տվեց, բայց նույնիսկ նրանց մեջ Նիկոլն առանձնացավ իր երկաթյա կամքով: Բայց դա հետո եղավ: Այն ժամանակ, երբ նախապատրաստում էր Խանասորի արշավանքը, նա Սալմաստում հավաքված 300 հերոսներից մեկն էր միայն:

**ՖՅՈՂՈՐ ՍԻԲԵՐՍԿԻ  
Ռուս լրագրող**

*“Վասպուրական” ակնարկից, որը գրվել է 1916 թ.,  
բայց ինչ-որ պատճառներով ժամանակին չի  
հրատարակվել:*

*Քաղված է “Նորք” հանդեսից, Երեւան, 1989, թիվ 12, էջ 122/*

29. Հայ պոեզիայի նկատմամբ իմ սերը հին կենսագրություն ունի, ինձ ուղեկցել է գրեթե իմ ողջ կյանքի ընթացքում. նրա մեջ տեսել եմ այն լավագույն իդեալների արտացոլումը, որոնք խոսում են իրենց ժողովրդի հոգեւոր մեծ կուլտուրայի մասին եւ երբեմն իրենից դրսևորման ձեւերով պարզապես զարմացնում են: Հայ բանաստեղծական արվեստի այդպիսի ներկայացուցիչներ են Գրիգոր Նարեկացին եւ Եղիշե Չարենցը...

**ԱՐՄԵՆԻ ՏԱՐԿՈՎՍԿԻ /ծնվել է 1907/  
Ռուս բանաստեղծ, թարգմանիչ**

*“Գարուն” ամսագիր, Երեւան, թիվ 12, էջ 13/*

30. Հայաստանն իմ կյանքում միշտ էլ մեծ տեղ է ունեցել: Ես ուղղակի կարող եմ ասել, որ սիրահարված եմ Հայաստանին, նրա բանաստեղծությանը, նրա կուլտուրային ու պատմությանը: Ինձ համար թանկ ու սիրելի է այն ամենը, ինչ ստեղծվել է հայ ժողովրդի ձեռքով, նրա դժվար պատմության ընթացքում: Հայաստանում



ամեն քար կենսագրություն ունի, ոգեղեն առնչություն, Հայաստանի ճամփաներով անցել է մեր պատմությունը ինքը: Հայաստանը պարզապես հրաշքների երկիր է: Եվ ինչպես ամեն մի երկիր, այնպես էլ Հայաստանի ուժն ու հմայքը կենդանի ապրող ժողովուրդն ինքն է, նրա լեզուն, որի միջոցով ժողովուրդը գնում է դեպի հոգեւոր անմահություն: Մեծ է հայ ժողովրդի հոգեւոր մշակույթը, բարձր է նրա մարդկայնության որակը, վկան՝ Գրիգոր Նարեկացու "Մատյան ողբերգությանը": Հանճարեղ բանաստեղծի տառապանքի խորությունը ցնցեց ինձ: Աստօն հետ նրա գրույցը ընդհանրապես գրույցն է երկնքի հետ՝ իր ներսի հետ: Նարեկացին աշխարհի մեծ բանաստեղծներից է և ոչ միայն հայ ժողովրդի պատիվն ու հպարտությունը, հոգեւոր թռիչքի վկայականը: Եվ ամեն մի ժողովրդի կուլտուրա կհարստանա՝ ունենալով Նարեկացի, և ես ուրախ եմ, որ մեծ բանաստեղծի ստեղծագործությունը հնչում է նաեւ իմ մայրենի՝ ռուսերեն լեզվով:

**ՄԻԽԱՅԵԼ ԴՈՒԴԻՆ /ծնվել է 1916/  
Ռուս բանաստեղծ**

*"Գարուն" ամսագիր, Երեւան, 1982, թիվ 12, էջ 14-15/*

31. Գրականությունների բարեկամությունը ժողովուրդների բարեկամությունն է: Ես քիչ բան գիտեի Հայաստանի մասին, բայց երբ գրողների համագումարում ծանոթացա Իսահակյանի, Շաթիրյանի, Կապուտիկյանի, Մարգարյանի, Հովհաննիսյանի հետ, Հայաստանը դարձավ անհրաժեշտություն, սկսեցի ծանոթանալ իմ բարեկամների պատմությանը, մշակույթին: Երբ առաջին անգամ Նարեկացի կարդացի, հասկացա, որ աշխարհն անձայր է: Իսահակյանին թարգմանելիս ապշում էի նրա խորությամբ ու պարզությամբ: Ես սիրահարվեցի Համո Սահյանի տաղանդին և նրա պատկերած Հայաստանին: Հետո Հայաստանի հանդեպ սերը կենտրոնացավ Վահան Տերյանի թարգմանության մեջ: Ես տառապում էի նրա ցավով: Հայ պոեզիան իմ մեջ է, Շնորհալիւն իմ մեջ է. "Անավտ լուսո, արեգակն արդար"՝ հայ պոեզիայի իմաստությունն օգնում է իմ հոգուն հավատալ իմ մոր օրորոցայինին:

**ՄԻԽԱՅԵԼ ԴՈՒԴԻՆ**

*"Գարուն" ամսագիր, Երեւան, 1986, թիվ 11, էջ 82/*

32. ... Երբ լսում եմ Սեւակի քնարի ոսկյա լարերի ղողանջը, իմ հիշողության մեջ հառնում եմ այդ երկրի անկրկնելի գույները, արթնանում է նրա խաղողի այգիների բույրը, և հնչում են հոգեպարար երգերը: Դա երջանիկ ու բանաստեղծական մարդկանց երկիր է: Իսկ Արարատը նրա Օլիմպոսի գագաթն է: Այստեղից էլ ողջ հայկական պոեզիայի մասշտաբը, այստեղից էլ իմ ընկերոջ՝ Պարույր Սեւակի պոեզիայի մասշտաբայնությունը: Հայաստանն ունի ընդօրինակման արժանի մեծեր: Ի՞նչն է ամենից ավելի զարմացնում և ի՞նչն է ամենից ավելի հիացնում հայ բանաստեղծի ստեղծագործությունների մեջ: Ինձ թվում է, ինչ-որ առանձնահատուկ, ես կասեի՝ սեւակյան հայացքը մարդու նկատմամբ: Դա հատուկ, նուրբ և շրջափայաց զգայնությունն է: Բարեկամական կարեկցանքն է յուրաքանչյուր մարդու նկատմամբ: Դժվարին պահերին ընթերցում ես Սեւակի բանաստեղծությունները, և հոգիդ թեթեւանում է: Նա բուժում է: Նա ձեռք է մեկնում մարդուն, նրան է տալիս իր ուրախությունը և վարակում բանաստեղծական տրամադրությամբ: Նա կատարում է այն, ինչ պարտավոր է կատարել յուրաքանչյուր իսկական բանաստեղծ, նա մարդուն մարդկայնացնում է:

... Սեւակը բառիս բուն իմաստով ժամանակակից բանաստեղծ է: Նրա դիմամիկ, խիստ ժամանակակից բառի ետեւում կանգնած է մարդկության պատմական

ու գեղագիտական ողջ հարուստ փորձը: Եվ առաջին հերթին, իհարկե, իր ժողովրդի փորձը...

Բայց եթե ուզում եք հասկանալ նրա բանաստեղծական խոսքը, զգալ շքեղ կոլորիտը և լսել նրա երաժշտությունը, ապա անհրաժեշտ է ճանաչել նաեւ բուն Հայաստանը: Դա զարմանալի երկիր է, քարերն ու ջրերը, այգիներն ու դաշտերը շնչում են հավերժությամբ: Իմ ծանոթությունը Հայաստանի հետ եղել է ծանոթություն մի հրաշալի աշխարհի հետ: Եվ մինչեւ այժմ փորձում եմ գուշակել հին խաչքարերի՝ քարե այդ հիերոգլիֆների առեղծվածը, մինչեւ այժմ ես չեմ բաժանվում Նարեկացու գրքից. նրա "Մատյանն" ինձ հիշեցնում է ծանր վիրավոր, բայց ծաղկի պես լուսավոր ու մաքուր հոգու ճիչ միջնադարյան անապատում: Մեծ Կոմիտասի մեղեդիներում ես լսում եմ հայ ժողովրդի ողբը: Իսկ մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանի գունեղ կտավներն ինձ ապշեցնում են երեւակայության թռիչքով:

... Դա երջանիկ ու բանաստեղծական մարդկանց երկիրն է:

**ԷՂՈՒՐԴՅԱ ՍԵԺԵԼԱՅՏԻՍ /ծնվել է 1919/  
Լիտվացի բանաստեղծ**

*"Պ. Սեւակի ընտրանու ռուսերեն իրատարակության առաջարանից*

*"Մոսկվա, 1975", որը կրում է "Լույսի և քարու երգիչը" խորագիրը:*

*Տես նաեւ "Սովետական գրականություն" ամսագիր, Երեւան, 1980, թիվ 11, էջ 112-113/*

33. Հայաստանը գրքի ու դպրության պաշտամունքի երկիր է:

34. Ինձ վրա անջնջելի տպավորություն թողեցին Հաղպատը, Սանահին., Սարտարապատը: Իսկ Գեղարդը... Եթե աշխարհը ժամանակին իմանար, նրան ոչ թե ութերորդ, այլ յոթերորդ հրաշալիքներից մեկը կհամարեր: Հաղպատի վանքը ինձ, որպես բանաստեղծի, պարտադրեց կապ որոնել ժողովրդի հոգեբանության և նրա ստեղծած ճարտարապետության միջեւ: Դա ինձ համար նոր, հետաքրքիր ու ելակետային խնդիր է:

**ԷՂՈՒՐԴՅԱ ՍԵԺԵԼԱՅՏԻՍ**

*"Սովետական գրականություն", Երեւան, 1980, թիվ 11, էջ 115/*

35. Այնպիսի բանաստեղծ, ինչպիսին Նարեկացին է, պատկանում է ողջ աշխարհին, և թեւեւ ուշացումով, բայց արդեն ժամանակն է, որ մարդկությունն իմանա նրա մասին, առնչվի նրա հանճարին, ժամանակն է, որ Նարեկացին դառնա աշխարհի բանաստեղծներից մեկը: Այսօր զարմանալ կարելի է, որ "Մատյան ողբերգության" պոեմը գրվել է շատ ավելի շուտ, քան մեծ Դանթեի "Աստվածային կատակերգությունը": Եվ մեր բոլորի մեղքն է, որ Նարեկացին նոր-նոր է սկսել թարգմանվել աշխարհի լեզուներով: Ինձ թվում է, որ նաեւ հայ ժողովրդի անտեղի համեստության հետեւանքն է: Ունենալ այդպիսի հզորությամբ բանաստեղծ և թաքուն պահել աշխարհից, թվում է շատ սխալ է: Իհարկե, ես հասկանում եմ, որ մեղավոր է նաեւ հայ ժողովրդի ազգային ճակատագիրը: Ինչեւիցե: Այսօր ես ինձ համար մեծ պատիվ եմ համարում Նարեկացին ներկայացնել իմ ժողովրդի լեզվով:

**ԷՂՈՒՐԴՅԱ ՍԵԺԵԼԱՅՏԻՍ**

*"Գարուն" ամսագիր", Երեւան, 1982, թիվ 1-2, էջ 14/*

## Մխիթար Գոշ (12-դ.)

### 6. Բամբակենին եւ Սոսին

Սոսու մերձակայքում երկրագործները ոռոգում էին բամբակի արտերը եւ պատւիրում միմեանց զգուշանալ, որ չտլորեն բամբակի ծառերը: Լսելով, որ բամբակենուն ծառ կոչեցին, սոսին բարկացաւ ու ասաց.

- Ինչպէ՞ս է դա ինձ հաւասար ծառ կոչուում, քանզի ես այսքան հաստ ու բարձր եմ, մեծ էլ տեղ գրաւում:

Եւ բամբակենին լսելի կերպով, առանց երկմտելու պատասխան տւեց, ասելով.

- Բարձր ես ու հաստ, բայց օգտակար չես: Ո՛չ շինածքի, ո՛չ պտղաբերութեան եւ ո՛չ էլ վառելու համար ես զովելի: Թամբր սուտեր ունենալով, անելի բամբասանքի ես արժանանում, քան զովեստի: Իսկ ես, թեպետ նաատ ու տկար, բայց օգտակար եմ ո՛չ միայն հարուստների, այլեւ աղքատների համար: Խնամելու, քաղելու, գործելու դէպքում ոչխարների բրդի, վուշի շերամի մետաքսի նման դառնում եմ հագուստ: Խոզակաղիւնից բացի, դու այլ բոլորովին չես տալիս:

Այսպէս նախատւելով բամբակենուց, սոսին լռեց:

Սնուտի եւ պարծենկոտ մարդկանց է լռեցնում առակս, նրանց, որ ունեն տեսք ու հասակ եւ ապրում են անօգուտ կեանքով, միւսներին, որ արհամարհում են տկարներին ու հասակով կարծերին, որոնք, սակայն, շատ բաներում պիտանի են ու օգտակար:

### 7. Մարդն՝ Ու Ծառերը

Մի չքաւոր մարդ ձմռանը գնաց այգի՝ պտուղ քաղելու: Եւ տեսնելով, որ ծառերը փայտացած են, սկսեց թշնամանալ, տրտնջալ, հարւածել ու ասել նրանց.

- Ինչո՞ւ պտուղ չունէք, որ ուտեմ ու կշտանամ,- ու սկսեց անելի չարանալ:

Եւ ծառերից մէկը քաղցրութեամբ ու համոզող խօսքով ասաց.

- Մի՛ տրտնիր, ո՛վ մարդ, եւ իզուր մի՛ բամբասիր, որովհետեւ սխալուում ես: Թեպետ կարիքաւոր, բայց ինչո՞ւ չգիտես, որ ձմռանը հանգստանում ենք եւ զորացնում մեր արմատները, որպէսզի կարողանանք գարնանը ծաղկել, ամռանը սնունդ տալ պտղին եւ աշնանը՝ հասնել ու կերակրել: Ինչո՞ւ չեկար այն ժամանակ, երբ մարդ, անասուն ու գազան վայելում էին մեր պտուղները: Այժմ գնա եւ վերադառնալով հարմար ժամանակ, կեր արչափ կը կամենաս:

Եւ գնաց մարդը այդ խօսքի յոյսով:

Առակիս ծառը խրատում է հիւրերին ու աղքատներին, որ հարմար ժամի գնան մեծարանք փնտրելու, հիւրերը՝ ուտելու եւ հանգստանալու, իսկ աղքատները՝ կարիքները բաւարարելու: Եւ ամէն ժամ հիւրընկալողները պատրաստ չեն ընդունելու, կամ բարեգործները ողորմութիւն տալու: Իսկ ամբաստանելու եւ տրտնջալու դէպքում չպէտք է չարանալ, այլ անհրաժեշտ է պատասխանել քաղցրութեամբ, բացատրել անպատրաստութեան պատճառները եւ այլ ժամի առատածեռնութիւնը:

### 8. Նշենին Ու Շագանակենին

Քաղցր նշենին, մոր կողմից եղբայր լինելով դառն նշենուն, նեղեց նրա դառնութիւնից եւ շագանակենուն դարձրեց իրեն բարեկամ ու եղբայր,

գտնելով, որ երկու որակով նա բարոյակից է իրեն: Եւ շատերից մեղադրելով, ասաց.

- Ով ինձ հակումներն ունի, նա է իմ եղբայրը:

Ոչ ոք չկարողացաւ հակաճառել:

Առակս յայտնում է, որ թէեւ եղբայրները հարազատ են եւ վարքով հակառակ են լինում իրար, հարկադրաբար բաժանուում են եւ օտար բարոյակիցներին լաւ համարում:

### 9. Խոհեմ Մարդը Եւ Ծառերը

Մի խոհեմ մարդ հարցրեց ծառերին.

- Ի՞նչն է պատճառը, որ ինչքան բարձրանում եք, այնքան խորն էք արմատներ գցում:

Եւ նրանք պատասխանում են.

- Խոհեմ լինելով, ինչպէ՞ս չգիտես, որ մենք չենք կարող այսքան ճիւղեր կրել եւ ընդդիմանալ հողների ճնշմանը, եթէ խոր եւ բազմաճիւղ արմատներ չունենանք: Տեսնում ես մեր եղբայր հաճարի եւ փիճի ծառերը, որ, թէեւ շատ ճիւղեր ունեն, չեն կարողանում դիմադրել, որովհետեւ չունեն նաեւ խոր արմատներ:

### 10. Դեղնուկի Պատասխանը

Գնդածաղիկը, կորնգանը, խլորձը, կապոյտ աւուրտը, սեզը եւ սրանց նմանները, ծաղրելով դեղնուկին, ասում էին.

- Ինչի՞ց է, որ մենք զւարճադէմ ենք, իսկ նա դեղնութեամբ հիւծւել է:

Լսելով, դեղնուկը պատասխանեց.

- Որովհետեւ անմիտ էք ու աներկիր: Չէք մտածում, որ մեզ համար գերանդի են սրում, իսկ ես մտատանջւելով, սարսափահար եղած դեղնում եմ:

## ՎԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

- Անբանը հաց ուտելիս առողջ է, աշխատելիս հիվանդ:

- Անձրեւի ծեծածը կարկուտն էլ կծեծի:

- Անձրեւն ինչ անի քարին, խրատն ի՞նչ անի չարին:

- Անճարը կերել է բանջարը:

- Անողը պրծավ, ասողը չարծավ:

- Անպտուղ ծառը կկտրեն, պտղատու ծառին քար կգցեն:

- Անտեր մնաս դու բողազ, ինչ որ տեսնես կորդաս:

- Անտեր ոչխարը գայլը կուտի:

- Անուշ հոտը վարդից կուզեն, մարդկութունը մարդուց կուզեն:

- Աշխատանքը սեւ է, հացն՝ սպիտակ:

## ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

- Աչքից հեռու, սրտից հեռու:

- Առանց կանչելու եկեղեցի էլ մի գնա:

- Ասեղն առաջ քեզ խրիր, հետո մախաթն՝ ուրիշին:

- Աստժու վրա հույս մի դիր, բայց ինքդ էլ անգործ մի մնա:

- Աստված էշին ճանաչել է, որ պղզեր չի տվել:

- Ավելորդ գովաբանությունը հայիոյանքից վատ է:

- Արաբական մի վատ մտուզն էլ մի ամբողջ գոմ էշից լավ է:

- Արջից մազ պոկելն էլ օգուտ է:

- Արտույտը ձեռքի մեջ լավ է, Քան կռունկը՝ երկնքում:

- Բրուտը կտորված փառչով ջուր կխմի:

## Ժամանց

### 1- Ուրախ անկյուն

- Գանձապահը փախել է:
- Իսկ չիրկիզուդ պահպանը նայե՞լ էք:
- Ի՞նչ էք ասում, նա այնտեղ չի տեղափոխվել:

\*\*\*

-Դուք անհարմար չե՞ք զգում, այդքան յաճախ դատարանում գտնվելու համար:

-Ոչ ձեռք մեծություն: Ինձ միշտ թւացել է, որ սա բաւականին լուրջ հիմնարկություն է:

\*\*\*

Դատաւորը,

-Դուք պնդում եք, որ ձեր ամուսինը, որը հիմա կերպ կանգնած է հենափայտերի վրայ, ձեզ ծեծի է ենթարկել:

-Գիտեք, այն ժամանակ, երբ նա ինձ ծեծում էր, դեռ հենափայտերով չէր:

\*\*\*

-Ասացեք խնդրեմ, դուք ապտակե՞լ էք այս տղամարդուն,- դատաւորը հարցնում է կնոջը:

-Ո՛չ:

-Նա ստում է,- բղաւում է տղամարդը:

-Չայնո կտրի՞ր, թէ չէ մի անգամ էլ կատանաս:

\*\*\*

-Չեր մօտ սառը զենք կա՞յ:

-Ի՞նչ իմանամ, ես նրա վրայ ջերմաչափ չեմ անրացրել:

### 2- Արդեօք գիտե՞ք

Որպէսզի բանկայի կափարիչները չժամգոտեն, կարելի է նրանց թեթեւակի ճարպ քսել:

\*\*\*

Կարտոֆիլը անհրաժեշտ է պահել մութ եւ սառը սենեակում (+3-ից +5 աստիճան):

\*\*\*

Այդ դրած եւ թթու դրած բանջարեղենը պէտք է պահել սառը տեղ եւ հետեւել, որպէսզի նրանք միշտ ծածկւած լինեն աղաջողով: Եթէ ի յայտ բորբոս, անհրաժեշտ է խնամքով հեռացնել, ծանրօցը լանալ, եռջրով խաշել եւ նորից դնել տեղը:

## 3. ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ

### 1. ՄԻՋՈՒԿԻՆ ՍՕՏ

Աշխարհագրութեան դասին դասատուն խօսում է ծովերի եւ ովկիանոսների խորութեան մասին:

- Ընկեր Սողոմոնեան, եթէ մենք բաթիսկաֆով խորասուզենք ոնկիանոսի ամենախոր հատակը, արդեօք երկրագնդի միջուկին ամենամօտը չե՞նք լինի:

- Ո՛չ,- պատասխանում է ուսուցիչը:

- Մտածեցեք, երեխաներ, թէ որտե՞ղ լինենք, որ երկրի միջուկին աւելի մօտ լինենք:

### 2- ՎԵՑ ՊԵՏՈՒԹԻՒՆ

Երոպայիւմ այն ո՞ր 6 պետութիւններն են, որոնց տերիտորիաների գումարը կազմում է 3272 քառ. կմ (Հայկական ՍՍՀ-ից մօտ 9 անգամ փոքր), իսկ բնակչութեան թիվը՝ 375 հազար մարդ (Հայկական ՍՍՀ բնակչութեան թից մօտ 7 անգամ պակաս):

### 3- ԵՐԱԾՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Դուք գիտե՞ք, թէ որտեղ են գտնուում Բեթովենի թերակղզին, Լիստի եւ գրիգի լեռները, Գլինկայի կղզին, Մոցարտի եւ Յենդելի սառցադաշտերը, Մենդելսոնի, Վերդիի եւ Շուբերտի ծովախորշերը, Բախի սառնապատ ծանծաղուտը: Գտե՞ք, որտե՞ղ են դրանք:

### 4- ԹՅՈՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ

Ճապոնիայիւմ մի օտար զբոսաշրջիկ երկաթուղային դրամարկից գնում է ուղեւորութեան մի տոմս:

Տոմսաւաճառը թյուրիմածութեամբ, թէ օտարերկրացու վատ առօգանութեան հետեւանքով, փոխանակ մայրաքաղաքի համար տոմս տալու, տալիս է նոյն երկրի արդիւնաբերական այն քաղաքի համար, որի անւան վերջին երկու տառերը, եթէ տեղափոխել անւան առաջ, ապա կստացւեր ճիշտ:

Այդ ո՞ր քաղաքներն են:

### 5- ՆՈՐ ՏԱՐԻ

Ինչ հաճելի է, երբ դրսում ցուրտ, սառնամանիք է, գետիկը ծածկւած է ձայն սպիտակ շերտով, իսկ մենք տաքուկ սենեակում կամ դպրոցի դահլիճում խաղալիքներով զարդարւած տոնածառի շուրջը երգում, պարում, ուրախանում ենք՝ դիմաւորելով նոր տարին:

Մենք չենք կարող պատկերացնել, որ ամռանը կամ զարմանն ու աշնանը դիմաւորենք նոր տարին:

Կան երկրներ, որտեղ նոր տարին դիմաւորում են տարւայ տարբեր եղանակներին:

Այդ ո՞ր երկրներն են եւ ինչո՞ւ է այդպէս:

## Պատասխաններ

1. Միջուկին մօտ- Երկրագնդի միջուկին ամենամօտ կետը բեւեռն է: Երկրագունդը բեւեռներում սեղմւած լինելու պատճառով, բեւեռային շառաւիղը հասարակածային շառաւիղից կարճ է մօտ 22 կիլոմետրով: Ովկիանոսի ամենախոր տեղը հասնում է մօտ 11 կիլոմետրի:

2. Վեց պետութիւն-Այդ պետութիւններն՝ 1) Անդորրա, որը գտնուում է Ֆրանսիայի եւ Իսպանիայի սահմանի վրայ, 2) Լիխտենշտեյն՝ Աւստրիայի եւ Շվեյցարիայի սահմանի վրայ, 3) Մոնակո՝ Ֆրանսիայիւմ Իտալիայի սահմանի մօտ, 4) Սան-Մարինո՝ Իտալիայիւմ, 5) Վատիկան՝ Հռոմում, 6) Լիքսենբուրգ՝ Բելգիայի, Ֆրանսիայի եւ ԳՖՀ-ի սահմանում:

3. Երաժշտական աշխարհագրութիւն- Այդ անուններին դուք կհանդիպէք Անտարկտիդայի քարտեզի վրայ:

4.Թյուրիմացութիւն- Կիոտո, Տոկիո:

5. Նոր Տարի- Մերձաւոր Արեւելքում եւ մի քանի այլ երկրներում մինչեւ այժմ պահպանւել է լուսնային օրացոյցը: Լուսինը երկրի շուրջը պտտւում է մօտ 29, 5 օրւայ ընթացքում եւ այդ ժամանակամիջոցը համարւում է մէկ ամիս, իսկ 12 պտոյտը (354 օր) մէկ տարի (մեր տարուց 11 օր պակաս), որի հետեւանքով տարւայ ամիսները չեն համընկնում տարւայ եղանակներին: Նրանց մօտ տարի լինում է եւ ծննանը եւ տարւայ միւս եղանակներին:

# Առողջապահական

## ԱՊԱԽԵԼ ՏԱՐԱԾԻԱԾ ՀԻՄՆԱԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ ԴԵՂԱԲՈՅՍԵՐՈՎ

### ԽՐՈՆԻԿԱԿԱՆ ԷՆՏԵՐԻՏ ԵՒ ԿՈԼԻՏ

Բարակ եւ հաստ աղիների լրծաթաղանթների բորբոքային- դիստրոֆիկ փոփոխություններ են հարուցում այդ օրգանների գործունեության խանգարումները: Շատ յաճախ այս երկու հիւանդությունները հանդիպում են միասին եւ կոչվում են խրոնիկական էնտերոկոլիտներ:

Առաջացման հմնական պատճառներն են արինալուծը, սալմոնելոզը, աղիքային այլ սուր վարակները, ճիճւային ինվազիաները, ժառանգական նախատրամադրվածությունը, որոշ դեղորայքների եւ հակաբիոտիկների օգտագործումը, աղիքային դիսբակտերիոզները, ալերգիաները, ձեռքբերովի կամ ի ծնէ ֆերմենտոպատիաները:

Հիւանդությունն ունի բազմաձեւ կլինիկական պատկեր այս կամ այն ախտանիշի արտայատուծությամբ կամ գերակշռությամբ:

Հիւանդության ախտանիշներն են փորկապուրիւնը (երբեմն լուծը), ծանրութեան զգացումը որովայնում, ընդհանուր թուլութիւնը, գլխացաւը, վատ տրամադրութիւնը: Երբ աղիներում գերակշռում են խմորման երեւոյթները, առաջանում են գազեր եւ աղիների փքւածութիւն, լսւում է աղիների զռզռոց, իսկ ծերերի մօտ ստոծանու բարձրանալու եւ սրտի վրայ ճնշելու հետեւանքով ծագում է հեւոց: Հիւանդութիւնը կարող է տեսել տարիներ:

**Բուժումը:** Ամենակարեւոր պայմանը սպիտակուցներով հարուստ, ածխաջրատներով պակաս, լիարժէք սնունդն է:

Դեղաբոյսերով բուժումը նպատակ ունի վերականգնել աղիների գործառնութեան ամէն տեսակի խանգարումները:

1. Հակաբորբոքային, դաբաղող, վարակազերծող, լուծը վերացնող ազդեցութիւններով օժտւած դեղաբոյսերի հաւաքներ.

- 1. Կաղնի (արմատ) 40 գ
- Ընկուզենի արքայական (տերեւներ) 60 գ

Պատրաստել եփուկ: Մէկ թէյի գդալ հունքին 2 բաժակ ջուր: Ամբողջը խմել կում- կում, մէկ օրվայ ընթացքում:

- 2. Եօթնտերեւուկ (կոճղարմատ) 20 գ
- Հապալասենի մրտենային (տերեւներ) 15 գ
- Հապալասենի մրտենային (պտուղներ) 15 գ
- Երիցուկ (ծաղիկներ) 15 գ
- Պատրաստել ջրաթուրմ 6 ժամ թրմել մէկ թէյի գդալ հունքը մէկ բաժակ սառը ջրում, որից յետոյ եփել եւ խմել կում- կում, օրայ ընթացքում:

- 3. Եօթնտերեւուկ (կոճղարմատ) 10 գ
- Անթառամ (ծաղիկներ) 10 գ
- Քենոն (պտուղներ) 10 գ
- Հապալասենի մրտենային (պտուղներ) 20 գ
- Եղեսպակ (տերեւներ) 30 գ
- Օգտագործել ջրաթուրմը, 1/2 բաժակ, օրական 2-3 անգամ, ուտելուց 15-20 րոպէ առաջ:

- 4. Հապալասենի մրտենային (պտուղներ) 20 գ
- Անանուխ (տերեւներ) 20 գ
- Մանդիկ մսագոյն (կոճղարմատ) 29 գ
- Երիցուկ դեղատու (ծաղիկներ) 30 գ
- Թուրմն օգտագործել տաք վիճակում 1/2 բաժակ, օրական 3-4 անգամ, ուտելուց 20-30 րոպէ առաջ:

- II. Եթէ լուծն ուղեկցւում է արինով.
- 1. Եօթնտերեւուկ (կոճղարմատ) 25 գ
- Արինախմիկ (կոճղարմատ) 25 գ
- Հովամախաղ (վերգետնեայ մաս) 50 գ
- Օգտագործել եփուկի ձեւով, կէսական բաժակ, օրական 3-4 անգամ, ուտելուց 20-30 րոպէ առաջ:
- 2. Եօթնտերեւուկ (կոճղարմատ) 15 գ
- Մանդիկ մսագոյն (կոճղարմատ) 15 գ
- Հովամախաղ (վերգետնեայ մաս) 30 գ
- Սագաթաթ (վերգետնեայ մաս) 10 գ
- Անանուխ (տերեւներ) 10 գ
- Երիցուկ դեղատուային (ծաղիկներ) 10 գ
- Մէկ ճաշի գդալ հաւաքին աւելացնել մէկ բաժակ եռման ջուր եւ թրմել: Խմել օրական 2-3 բաժակ:

III. Կոլիտներ, որոնք ուղեկցւում են փորկապուրեամբ.

- 1. Թանթրենի սեւ (ծաղիկներ) 10 գ
- Եղինջ (ծաղիկներ) 10 գ
- Երիցուկ (ծաղիկներ) 10 գ
- Բեկտենի (կեղեւ) 10 գ
- Պատրաստել եփուկ՝ մէկ ճաշի գդալ հունքին մէկ բաժակ եռացրած ջուր: Խմել օրական 2-3 բաժակ:

- 2. Թանթրենի սեւ (ծաղիկներ) 10 գ
- Եղինջ (ծաղիկներ) 10 գ
- Երիցուկ (ծաղիկներ) 10 գ
- Բեկտենի (կեղեւ) 10 գ
- Պատրաստել եփուկ՝ մէկ ճաշի գդալ հունքին մէկ բաժակ եռացրած ջուր: Խմել օրական 2-3 բաժակ:

- 2. Բեկտենի (կեղեւի փոշի) 20 գ
- Դժնիկ (պտուղների փոշի) 20 գ
- Ռազիանա (պտուղների փոշի) 10 գ
- Լաւ խառնել փոշիները: Խմել 1/2-1 թէյի գդալ փոշի, օրական 2-3 անգամ:

- 3. Բեկտենի (կեղեւ) 20 գ
- Ռազիանա (պտուղներ) 20 գ
- Դժնիկ լուծողական (պտուղներ) 30 գ
- Մատուտակ (արմատ) 30 գ
- Օգտագործել եփուկը քնելուց առաջ, 1 բաժակ:
- 4. Բեկտենի (կեղեւ) 20 գ
- Թանթրենի սեւ (ծաղիկներ) 20 գ
- Ռազիանա (պտուղներ) 20 գ
- Անիսոն (պտուղներ) 10 գ
- Օգտագործել ջրաթուրմը ճաշից եւ ընթրիքից յետոյ, 1 թէյի բաժակ:

IV. Աղիների ատոնիայի հետ կապւած փորկապուրիւնների դէպքում օգտագործող բուժական հաւաք.

- Բեկտենի (կեղեւ) 15 գ
- Մատուտակ (արմատ) 15 գ
- Ռազիանա (պտուղներ) 15 գ
- Տուղտ դեղատու (արմատ) 30 գ
- Կտաւատ (սերմեր) 30 գ
- Օգտագործել ջրաթուրմը 1/3 բաժակ, օրական 3 անգամ, ուտելուց առաջ:

V. Եթէ աղիներում գերակշռում են նեխման եւ խմորման երեւոյթները, օգտագործել հետեւեալ հաւաքը.

- Թխենի (պտուղներ) 40 գ
- Հապալասենի մրտենային (հատապտուղներ 40 գ եւ տերեւներ) 40 գ
- Երիցուկ (ծաղիկներ) 40 գ
- Քենոն (պտուղներ) 40 գ
- Օգտագործել եփուկը առաւօտեան, 1/2 - 3/4 բաժակ, ուտելուց առաջ: